ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ
2024 ԹՎԱԿԱՆԻ

Հ Ա Շ Վ Ե Տ Վ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ն Ե Ր Ը

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՏԱՐԵԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՎ
ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ք. Երևան

Ն Ա Խ Ա Բ Ա Ն

Սույն հաշվետվությունները ներկայացնում են Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի (այսուհետև՝ Փաստաբանների պալատ) 2024 թվականի (այսուհետև՝ Հաշվետու ժամանակահատված) տարեկան գործունեությունը և ռազմավարության ծրագրի կատարողականը: Հաշվետվությունները բովանդակում են համապարփակ տեղեկատվություն Հաշվետու ժամանակահատվածում իրականացված աշխատանքների, ինչպես նաև դրանց արդյունքների վերաբերյալ:

Առաջին բաժնում ներկայացված է Փաստաբանների պալատի 2022-2025 թվականների Ռազմավարության ծրագրի 2024 թվականի հաշվետվությունը:

Երկրորդ բաժնում ներկայացված է Փաստաբանների պալատի 2024 թվականի տարեկան գործունեության վերաբերյալ հաշվետվությունը:

❖ ԲԱԺԻՆ Ի. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ

Ի. ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՄԻԱՍՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՈՒՄ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատը փաստաբանների մասնագիտական, անկախ, ինքնակառավարվող մարմին է, որն ունի օրենքով սահմանված հստակ խնդիրներ, որոնց իրագործմանը պետք է ձգտի իր ողջ գործունեության ընթացքում: Կառույցի առջև դրված խնդիրները լավագույնս կատարելու համար անհրաժեշտ է փաստաբանական համայնքի միասնականությունն ու համախմբվածությունը:

Ինստիտուցիոնալ միասնականության բացակայությունը վտանգավոր և կործանարար է փաստաբանության հեղինակության և կարգավիճակի համար:

Հաշվի առնելով փաստաբանական համայնքի միասնականության և համախմբվածության կարևորությունը, Փաստաբանների պալատն իր առաջնային խնդիրներից է դիտարկում փաստաբանական ինստիտուտի միասնականության պահպանումն ու ամրապնդումը:

Ինչպես յուրաքանչյուր մասնագիտական համայնքի, այնպես էլ փաստաբանական ինստիտուտի ճիշտ գործունեության և անկախության պահպանման համար կարևոր է ներքին իրավական ակտերի շարունակական զարգացումն ու կատարելագործումը: Ինչպես նախորդ տարիներին, այնպես էլ 2024 թվականին ՀՀ փաստաբանների պալատի ներքին իրավական ակտերում կատարվել են պահին համահունչ փոփոխություններ և լրացումներ:

Մասնավորապես՝

1. ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի 11.02.2020թ. թիվ 4/11-Լ որոշման հավելվածով սահմանված **«Այլ պետության փաստաբանի հավատարմագրման մասին» կարգի** 22-րդ կետը վերախմբագրվել է ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի 19.02.2024թ. թիվ 3/12-Լ որոշմամբ:

2. ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի 13.01.2023թ. թիվ 2/5-Լ որոշման հավելվածով սահմանված **«Փաստաբանների վերապատրաստման, դրա համար անհրաժեշտ վճարների չափը սահմանելու և վճարելու» կարգի** 35-րդ և 38-րդ կետերը փոփոխվել են, իսկ 46-րդ կետը լրացել է ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի 02.04.2024թ. թիվ 5/14-Լ որոշմամբ:

3. ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի 13.01.2023թ. թիվ 2/5-Լ որոշման հավելվածով սահմանված **«Փաստաբանների վերապատրաստման, դրա համար անհրաժեշտ վճարների չափը սահմանելու և վճարելու» կարգը** սահմանվել է նոր խմբագրությամբ համաձայն հավելվածի ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի 12.12.2024թ. թիվ 19/12-Լ որոշմամբ:

Հաշվետու ժամանակահատվածում կատարվել են այցելություններ դեպի ՀՀ մարզեր: Մարզային այցերի շրջանակներում 2024 թվականի մարտի 23-ին ՀՀ փաստաբանների պալատի նախագահ Սիմոն Բաբայանը, աշխատակազմի ղեկավար Լուսինե Սարգսյանը և Հանրային պաշտպանի գրասենյակի ղեկավար Գևորգ Մկրտչյանը Գյումրիում հանդիպում են ունեցել Շիրակի մարզի փաստաբանների հետ: Հանդիպման ընթացքում քննարկվել են փաստաբանության ոլորտին առնչվող արդի հիմնախնդիրները, այդ թվում՝ հարկային բեռի ավելացմանն առնչվող հարցեր: Փաստաբաններին է ներկայացվել նաև էլեկտրոնային արդարադատության համակարգը, դրան առնչվող մի շարք հարցեր[1]:

2024 թվականի ապրիլի 20-ին ՀՀ փաստաբանների պալատի նախագահ Սիմոն Բաբայանը, նախագահի տեղակալ Հարութ Ակլունցը, Հանրային պաշտպանի գրասենյակի ղեկավար Գևորգ Մկրտչյանը և Պալատի խորհրդի անդամ Արսեն Հարությունյանը Վանաձորում հանդիպել են Լոռու մարզի փաստաբանների հետ: Հանդիպման ընթացքում քննարկվել են փաստաբանության ոլորտին առնչվող արդի խնդիրները և փաստաբաններին հուզող մի շարք առանցքային հարցեր[2]:

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի նախագահ Սիմոն Բաբայանի **2024 թվականի հունիսի 21-ի** որոշմամբ Հայաստանի Հանրապետության **մի շարք մարզերում ՀՀ փաստաբանների պալատի մարզային համակարգողների ընտրության կապակցությամբ հրավիրվել է փաստաբանների ժողով** (մարզերի փաստաբանների համատեղ հավաք):

Մարզային համակարգողների ընտրություններ են անցկացվել Արագածոտնի, Արարատի, Արմավիրի, Լոռու, Շիրակի, Սյունիքի մարզերում: Արդյունքում ընտրվել են նշված մարզերի համակարգողները:

Բացի այդ, նշված ժամանակահատվածում ՀՀ փաստաբանների պալատը շարունակել է Հանրային պաշտպանի գրասենյակի ծանրաբեռնվածությունը թոթափելու գործընթացը, հանդիպումներ և քննարկումներ է ունեցել արդարադատության ոլորտում լիազոր պետական մարմնի ներկայացուցիչների հետ: Դրա արդյունքում 2024 թվականի հուլիս ամիսն Հանրային պաշտպանի գրասենյակին տրամարդվել է հանրային պաշտպանների 15 լրացուցիչ հաստիք:

[1] Տե՛ս հետևյալ հղումով https://www.advocates.am/news/view/3858.html
[2] Տե՛ս հետևյալ հղումով https://www.advocates.am/news/view/3860.html

➢ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԸ

2024 թվականի տարեսկզբին փաստաբանական համայնքը կանգնել է նոր մարտահրավերի առջև: Ողջ տարվա ընթացքում համայնքի պայքարը հիմնականում ուղղված է եղել պետական մարմինների նոր հարկային քաղաքականության դեմ:

2024 թվականի տարեսկզբին շրջանառության մեջ է դրվել *«Հայաստանի*

Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» նախագիծը (այսուհետ՝ նաև Նախագիծ): Նախագծով նախատեսվում էր փաստաբանական ծառայությունների մատուցումը տեղափոխել ընդհանուր հարկային դաշտ, այսինքն՝ **շրջանառության հարկի փոխարեն, փաստաբանական ծառայությունների մատուցման համար գանձել 18% (անհատ ձեռնարկատերերի համար՝ 23%) շահութահարկ և 20% ավելացված արժեքի հարկ:**

Բացի այդ, Նախագծով նախատեսվում էր **հարկել նաև անվճար իրավաբանական օգնությունը:**

Նախագծի շրջանառության մեջ դրվելու պահից ակնհայտ էր, որ դրա ընդունումը խարխլելու է փաստաբանության իրավապաշտպան առաքելության հիմքերը:

Հաշվի առնելով ասվածը և մյուս բոլոր բացասական հետևանքները, որոնք անխուսափելիորեն պետք է առաջանային Նախագծի ընդունման արդյունքում, Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատը, նշված նախագծի ընդունումը կանխելու, ինչպես նաև դրա ընդունումից հետո օրենքի սահմանադրականությունը վիճակելու ուղղությամբ հաշվետու ժամանակահատվածում իրականացրել է բազմածավալ աշխատանքներ:

Մասնավորապես՝

- Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի նախաձեռնությամբ 2024 թվականի հունվարի 30-ին և մայիսի 16-ին իրականացվել են **Ակումբի նիստեր**, որոնց շրջանակներում քննարկվել են Նախագծի խնդրահարույց կետերը, դրա ընդունման բացասական հետևանքները, փաստաբանական համայնքի անելիքները՝ Նախագծի ընդունումը կանխելու ուղղությամբ: Փաստաբանների պալատի պաշտոնական կայքէջում կատարվել են ամփոփիչ հրապարակումներ:
- Միաժամանակ իրականացվել է նաև **բողոքի ակցիա**, որի շրջանակներում փաստաբանները մեկ օր հրաժարվել են Հայաստանի Հանրապետության պետական մարմիններում (այդ թվում՝ դատարաններում, նախաքննության մարմիններում) պաշտպանություն, ներկայացուցչություն իրականացնելուց:
- Պալատը Նախագծի վերաբերյալ **ծավալուն հակափաստարկներ է ներկայացրել Ազգային ժողովի նախագահին, Վարչապետի աշխատակազմին, ՀՀ ֆինանսների նախարարությանը, Արդարադատության նախարարությանը: Պալատը դիմել է նաև Մարդու իրավունքների պաշտպանին:**
- Հարցի շուրջ **Պալատի նախագահի միջնորդությամբ քննարկում է կազմակերպվել Ազգային ժողովի պետական-իրավական հարցերի մշտական հանձնաժողովում**, որին մասնակցել են նաև Պալատի ներկայացուցիչները:

- Օրենքի երկրորդ ընթերցումից առաջ **քննարկում** է կազմակերպվել նաև Ազգային Ժողովի տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովի կողմից, որին ևս Պալատի ներկայացուցիչները մասնակցել են, ներկայացրել նախագծի անընդունելիության հիմնավորումները:

- Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատը դիմել է՝
  - **Եվրոպայի Խորհրդի Կոռուպցիայի դեմ պետությունների խմբին (GRECO) և դրա մոնիտորինգային խմբին,**
  - **Եվրոպայի խորհրդի Արդարադատության արդյունավետության եվրոպական հանձնաժողովին,**
  - **Եվրոպայի խորհրդի մարդու իրավունքների հանձնակատարին,**
  - **Իրավական համագործակցության եվրոպական կոմիտեին,**
  - **Եվրոպայի փաստաբանների և իրավաբանների միությունների խորհրդին (CCBE),**
  - **Փարիզի փաստաբանների պալատի հետ համատեղ զեկույց է ներկայացրել Միավորված ազգերի կազմակերպության գլխավոր ասամբլեային: 2025 թվականի փետրվարին հարցի առնչությամբ հրավիրված են նախնական լսումներ:**

- Նախագծի ընդունման բացասական հետևանքների մասին Փաստաբանների պալատը բազմիցս բարձրաձայնել է տարբեր **լրատվության միջոցներով, իրականացրել է մամուլի ասուլիսներ:**
- Նախագծի, որպես օրենք ընդունումից հետո՝ 2024 թվականի հունիսի 14-ին, տեղի է ունեցել **Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի նիստ**, որի ընթացքում որոշում է կայացվել **դիմել Հայաստանի Հանրապետության Նախագահին, Մարդու իրավունքների պաշտպանին, Ազգային Ժողովի պատգամավորներին՝** «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի (այսուհետև՝ Օրենք) Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու նպատակով՝ Սահմանադրական դատարան դիմում ներկայացնելու համար:
- **2024 թվականի հունիսի 17-ին Փաստաբանների պալատը դիմել է Հայաստանի Հանրապետության նախագահին՝ նշված օրենքը չստորագրելու և**

Սահմանադրության դրույթներին դրա համապատասխանությունը վիճարկելու նպատակով՝ Սահմանադրական դատարան դիմելու խնդրանքով:

- **2024 թվականի հուլիսի 07-ին ՀՀ փաստաբանների պալատը դիմել է Մարդու իրավունքների պաշտպանին՝ ներկայացնելով կարծիք «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՕ-285-Ն ՀՀ օրենքի Սահմանադրությանն առերևույթ հակասելու, և Սահմանադրությանն օրենքի համապատասխանությունը որոշելու հարցով Սահմանադրական դատարան դիմելու վերաբերյալ:**
- 2024 թվականի հոկտեմբերի 30-ին, այս հարցով տեղի է ունեցել **Ակումբի հերթական նիստը,** որի շրջանակներում կայացված որոշման մասին կրկին կատարվել է հրապարակում Փաստաբանների պալատի պաշտոնական կայքում:
- 2024 թվականի նոյեմբերի 20-ին, **Ազգային ժողովում խորհրդարանական լսումների ժամանակ Փաստաբանների պալատի ներկայացուցիչները բարձր ամբիոնից ներկայացրել են Օրենքի խնդրահարույց դրույթների և ապագայում դրանց կիրառման բացասական հետևանքները:** Նշվածով պայմանավորված՝ Օրենքի վերաբերյալ նույն ամբիոնից բացասական կարծիքներ են հայտնել նաև մի շարք պատգամավորներ:
- Նոյեմբերի 26-ին Փաստաբանների պալատում տեղի է ունեցել հերթական **մամուլի ասուլիսը** որտեղ նախաձեռնող խմբի փաստաբանները ներկայացրել են ՀՀ ֆինանսների նախարարի՝ առերևույթ կոռուպցիոն ռիսկեր պարունակող գործողությունները: Ներկայացվել է հանցագործության մասին հաղորդում:
- Դեկտեմբերի 10-ին Փաստաբանների պալատի ներկայացուցիչն այս և փաստաբանության համար կարևոր մի շարք այլ հարցերի վերաբերյալ **ելույթ է ունեցել Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի ընթացքում:**

Խնդրի լուծմանն ուղղված աշխատանքները, այդ թվում՝ Օրենքի դրույթների սահմանադրականության հարցը բարձրացնելու հետ կապված, հաշվետու ժամանակահատվածում իրականացվել են ամենօրյա ռեժիմով:

Պալատը նախնական պայմանավորվածություն է ձեռք բերել Ազգային Ժողովի պատգամավորների հետ օրենքի սահմանադրականությունը վիճարկելու համար ՀՀ սահմանադրական դատարան դիմում ներկայացնելու վերաբերյալ:

Հաշվետու ողջ ժամանակահատվածում, ՀՀ փաստաբանների պալատը ձեռնարկել է բոլոր հնարավոր միջոցները, որպեսզի պաշտպանի փաստաբանական համայնքը իրավապաշտպան գործունեության դեմ պետության կողմից վարվող կործանարար քաղաքականությունից և դրա հետևանքներից:

ՀՀ փաստաբանների պալատը մշտապես ձգտել և ձգտելու է ապահովել իր անդամ փաստաբանների իրավապաշտպան գործունեության անխափան ընթացքը, ինստիտուցիոնալ միասնականությունն ու համախմբվածությունը:

➢ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

2024 թվականի դեկտեմբեր ամսվա դրությամբ Փաստաբանների պալատում (այդ թվում՝ Հանրային պաշտպանի գրասենյակում) աշխատել է **156 անձ**, որից՝

1. ՀՀ փաստաբանների պալատի աշխատակազմում՝ 28 աշխատող[3].
2. Հանրային պաշտպանի գրասենյակի աշխատակազմում՝ 19 աշխատող.
3. Հանրային պաշտպան՝ Երևան քաղաքում և մարզերում՝ 109 աշխատող (այդ թվում՝ ոչ լրիվ դրույքաչափերով աշխատող հանրային պաշտպանները):



[3] ՀՀ փաստաբանների պալատի 28 հաստիքներից 9-ի աշխատավարձի դրույքաչափի 50%-ը վճարվում է պետական բյուջեի մասին համապատասխան օրենքով Հանրային պաշտպանի գրասենյակի պահպանման համար հատկացված գումարից, քանի որ այդ հաստիքների գործառույթներն ուղղված են նաև Հանրային պաշտպանի գրասենյակի սպասարկմանը:

➢ ԳՈՐԾՈՂ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ԹԻՎԸ

2024 թվականի դեկտեմբերի դրությամբ գործող փաստաբանների թիվը կազմել է **2817 փաստաբան**, որից 1260-ը՝ կին փաստաբան **(45%),** իսկ 1557-ը՝ տղամարդ փաստաբան **(55%):**



611 փաստաբանի արտոնագիր եղել է կասեցված:

II. ՓԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆՆ ԱՐՏԱՔԻՆ ՄԻՋԱՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ (ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ԳԱՂՏՆԱԼՍՄԱՆ) ՎԵՐԱՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետությունում փաստաբանության՝ որպես արդարադատության համակարգի ինստիտուտի զարգացման, ինչպես նաև մասնագիտության նկատմամբ հարգանքի ձևավորման կարևորագույն նախադրյալ է հանդիսանում Փաստաբանների պալատի անդամ փաստաբանների իրավունքների պաշտպանության ապահովումը, ինչպես նաև այդ իրավունքների արդյունավետ իրացման համար անհրաժեշտ միջավայրի ստեղծումը:

ՀՀ փաստաբանների պալատը, կարևորելով փաստաբանական գործունեության անխոչընդոտ իրականացումն ու արտաքին միջամտությունների բացառումը, ստանձնել է այդ ուղղությամբ բոլոր անհրաժեշտ միջոցառումներն անցկացնելու և դրանց մասին տեղեկատվության մատչելիությունն ապահովելու առաքելությունը:

Շնորհիվ վերջին տարիներին փաստաբանական համայնքի դեմ իրականացված ոտնձգությունների դեմ մղված միասնական և համախմբված պայքարի՝ 2024 թվականին փաստաբանական գործունեության նկատմամբ պետական միջամտությունների թիվն անհամեմատ նվազել է:

Ստորև կներկայացվեն փաստաբանական գործունեության նկատմամբ 2024 թվականին տեղի ունեցած միջամտություններն ու ձեռնարկված միջոցները: Անհատականացնող տվյալները չեն հրապարակվում:

2024թ. հուլիսի 22-ին Փաստաբանն ահազանգել է, որ Երևանի քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական բաժնի քննիչները խուզարկություն են իրականացնում իր գրասենյակում: ՀՀ փաստաբանների պալատի նախագահի տեղակալ Հարութ Ակլունցը և արագ արձագանքման հանձնախմբի համակարգող Գևորգ Մկրտչյանն այցելել են գրասենյակ: Ձեռնարկված միջոցներով հնարավոր է եղել կանխել փաստաբանական գաղտնիք կազմող տեղեկությունների առգրավումը:

2024 թվականի հունիսի 10-ին Փաստաբանը դիմել է Փաստաբանների պալատ հայտնելով, որ ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի քննչական բաժնի քննիչը (այսուհետ՝ նաև Քննիչ) քրեական գործի շրջանակներում իրեն հրավիրում է հարցաքննության: Հարցաքննությունը կապված է իր կողմից 7 տարի առաջ տրամադրված փաստաբանական ծառայության հետ, առնչվում է փաստաբանական գաղտնիք

կազմող տեղեկություններին:

Փաստաբանի դիմումը և ներկայացրած հանգամանքները քննարկվել են Փաստաբանների պալատի փաստաբանների իրավունքների պաշտպանության հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) կողմից:

Հանձնաժողովը հարցը քննարկել է իրավաբանական օգնության շրջանակներում փաստաբանին հայտնի դարձած տեղեկությունների վերաբերյալ հարցաքննելու օրենսդրական արգելքի, նրա մասնագիտական գործունեության անկախության և դրա նկատմամբ միջամտության տեսանկյունից:

Գրություն է հասցեագրվել ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչություն պետի տեղակալին, որում ներկայացվել է Պալատի դիրքորոշումը Փաստաբանի հարցաքննության անհնարինության վերաբերյալ:

Արդյունքում Քննիչը ձեռնպահ է մնացել Փաստաբանին հարցաքննելուց:

2024 թվականի հոկտեմբերի 17-ին Փաստաբանը դիմել է Փաստաբանների պալատ հայտնելով, որ ՀՀ հակակոռուպցիոն դատարանի դատավորն արգելել է իր օգնականին (փաստաբանի օգնական) մասնակցել դռնփակ դատական նիստին: ՀՀ փաստաբանների պալատը ուսումնասիրելով ներկայացված դիմումը, գրություն է հասցեագրել Բարձրագույն դատական խորհրդին «Փաստաբանության մասին» օրենքով փաստաբանի օգնականին տրված կարգավիճակի, վերջինիս առաքելության, ինչպես նաև այդ համատեքստում դատական նիստերին նրա մասնակցությունը խոչընդոտելու անթույլատրելիության վերաբերյալ: Պալատը խնդրել է ձեռնարկել միջոցներ նմանօրինակ խոչընդոտների հետագա վերացման ուղղությամբ: Նշված գրությունը Դատական դեպարտամենտը շրջանառել է իրավասու դատարաններ:

2024 թվականի դեկտեմբերի 18-ին հայտնի է դարձել, որ ձերբակալվել է ՀՀ փաստաբանների պալատի անդամ հանդիսացող Փաստաբան: Այդ մասին տեղեկանալուն պես, Պալատի նախագահ Սիմոն Բաբայանը կապ է հաստատել վերջինիս շահերի պաշտպանությունն իրականացնող փաստաբանների հետ, քննարկել դեպքի հանգամանքները, հայտնել Պալատի պատրաստակամությունը անհրաժեշտ օժանդակություն ցուցաբերելու հարցում: Ընդգծվել է հետագա զարգացումները ուշադրության կենտրոնում պահելու կարևորությունը:

III. ՓԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱՎԱԿԻՐԱՌ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ, ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԻ ՎՐԱ ՀԻՄՆՎԱԾ, ՈՉ ՖՈՐՄԱԼ,

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՍՏԵՂԾՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆ

Իրավակիրառ մարմինների ճիշտ աշխատանքն ուղիղ կապ ունի փաստաբանների իրավապաշտպան առաքելության իրականացման հետ: Որքան լավ է գործում իրավակիրառ համակարգը, այնքան բարձր է փաստաբանի իրավապաշտպան գործունեության արդյունավետությունը:

Բնականաբար փաստաբանական գործունեություն իրականացնելիս, անձանց իրավունքների պաշտպանության շրջանակներում փաստաբաններն առնչվում են տարբեր իրավակիրառ մարմինների, այդ թվում՝ դատական համակարգում դրական և բացասական երևույթների հետ: Նշված հանգամանքով պայմանավորված՝ ձևավորվում է նաև մասնագիտական կարծիք այդ մարմինների աշխատանքի արդյունավետության վերաբերյալ:

Եվրոպական դատավորների խորհրդատվական խորհրդի **2014 թվականի թիվ 17 կարծիքում** նշվել է, որ գնահատումն առանցքային նշանակություն ունի արդարադատության որակի բարձրացման համատեքստում:

Փաստաբանների կողմից դատարանների գնահատման պրակտիկան լայն կիրառություն է գտել նաև **ԱՄՆ-ում**: Նկատի ունենալով վերոգրյալը՝ ակնառու է, որ համապատասխան չափորոշիչների գործածմամբ, ոչ ֆորմալ գնահատումն ի զորու է իրականացնել նաև Հայաստանի Հանրապետության փաստաբանական համայնքը: Ճիշտ ընտրված չափանիշներով և գործիքներով իրականացված գնահատումն անխուսափելիորեն նպաստելու է արդարադատության որակի բարձրացմանմ ու իրավունքի գերակայության ամրապնդմանը:

Վերոգրյալով պայմանավորված ՀՀ փաստաբանների պալատը որպես փաստաբանական համայնքը համախմբող կառույց՝ նպատակադրվել է ձեռնարկել միջոցներ ստեղծելու համար իրավակիրառ մարմինների, այդ թվում՝ դատավորների, դատախազների, քննիչների և մի շարք այլ պաշտոնատար անձանց **միջազգային չափորոշիչների վրա հիմնված, ոչ ֆորմալ, օբյեկտիվ գնահատման համակարգ**, որը կնպաստի պետական կառույցների աշխատանքի որակի և արդյունավետության մակարդակի բարձրացմանն ու այդ մարմիններում բացասական տարատեսակ երևույթների նվազմանը, որպես արդյունք՝ **կբարելավվի արդարադատության համակարգը**:

Այս նպատակն իրագործելու համար 2024 թվականին շարունակվել են այս ծրագրի իրականացման համար կարևորություն ունեցող հարցերի շուրջ դեռևս նախորդ տարի մեկնարկած հանդիպումները, քննարկումները:

Բացի այդ, նախաձեռնվել են քննարկումներ, տեղի են ունեցել հանդիպումներ միջազգային գործընկերների հետ: Հանդիպումների ընթացքում միջազգային փորձի տեսանկյունից քննարկվել են գնահատման համակարգի արդյունավետությունը, ներդրման մեխանիզմները, օբյեկտիվ գնահատման չափանիշների տեսակները և մի շարք այլ հարցեր: Ի թիվս այլ հանդիպումների, 2024 թվականի ապրիլի 12-ին ՀՀ փաստաբանների պալատի նախագահ Սիմոն Բաբայանը հյուրընկալել է ԱՄՆ դատավոր Թոդ Էդինսին: Հանդիպման ընթացքում քննարկվել են դատավորների գործունեության գնահատման վերաբերյալ Ամերիկայի Միացյալ Նահանգների փորձը[4]: Վերջինիս հետ հաղորդակցությունը շարունակվել է նաև Հայաստան այցելությունից հետո: Նրա կողմից Պալատին են փոխանցվել ԱՄՆ-ում գործող՝ դատավորների գնահատման համակարգին առնչվող նյութեր: Դրանք ուսումնասիրվել են Փաստաբանների Պալատում՝ արդյունավետ փորձը դուրս բերելու նպատակով:

ՀՀ փաստաբանների պալատը կարևորում է արդարադատության համակարգի բարելավմանն ուղղված միջոցների կենսագործումը: Հաշվի առնելով կատարված ծավալուն ուսումնասիրությունների արդյունքները, որոնք վկայում են այն մասին, որ այս համակարգի ներդրումը զգալիորեն նպաստում է արդարադատության արդյունավետության մակարդակի բարձրացմանը, ՀՀ փաստաբանների պալատը վճռական է շարունակել նշված ուղղությամբ աշխատանքների իրականացումը և Հայաստանի Հանրապետությունում ներդնել անկախ մասնագիտական կարծիքի արտահայտման այս կարևոր հարթակը:

IV. ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՓԱՍՏԱԲԱՆԻ ԴԵՐԻ ԵՎ ՀԵՂԻՆԱԿՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ

Փաստաբանների պալատը շարունակաբար տարաբնույթ նախաձեռնություններ և միջոցառումներ իրականացնելու եղանակով մշտապես նպաստել է հասարակության մեջ փաստաբանի դերի և հեղինակության բարձրացմանը:

ՀՀ փաստաբանների պալատի 2022-2025 թթ. Ռազմավարության ծրագրում, որպես ոլորտային կարևոր նպատակ է ընդգրկվել փաստաբանների դերի և հեղինակության բարձրացմանն ուղղված միջոցառումների պարբերականության վերականգնումը: Դրա անհրաժեշտությունը ծագել էր նախորդ տարիներին

[4] *Տե՛ս հետևյալ հղումով՝ https://www.advocates.am/news/view/3852.html*

ստեղծված համաճարակային և պատերազմական իրավիճակով պայմանավորված միջոցառումների ինտենսիվության նվազման արդյունքում:

Ստորև ներկայացվում են Հաշվետու ժամանակահատվածում ՀՀ փաստաբանների պալատի նախաձեռնությամբ իրականացված՝ հասարակության մեջ փաստաբանի դերի և հեղինակության բարձրացմանն ուղղված միջոցառումները:

➢ «ԱՆՎՃԱՐ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ԿԱՆԱՆՑ 2024»

ՀՀ փաստաբանների պալատը, ձևավորված ավանդույթի համաձայն՝ Կանանց միջազգային օրվա կապակցությամբ իրականացրել է կանանց իրավունքներին նվիրված միջոցառում, որի շրջանակներում փաստաբանները, փաստաբանական գրասենյակները և ՀՀ փաստաբանական ակադեմիան 2024 թվականի մարտի 6-ին և 7-ին հանրապետության ամբողջ տարածքում անվճար իրավաբանական խորհրդատվություն են տրամադրել կանանց:

Այս միջոցառման ամենամյա անցկացումը նպատակ է հետապնդում Հայաստանում կանանց իրավունքների պաշտպանությունը խթանելու, ինչպես նաև փաստաբանի իրավապաշտպան առաքելությունը հասարակությանը ներկայացնելու, փաստաբանին դիմելու իրավական մշակույթը բարձրացնելու[5]:

➢ ԱՆՎՃԱՐ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՎԱՔՆԵՐԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԲԵՐՄԱՆ ԵՆԹԱՐԿՎԱԾՆԵՐԻՆ

Հայաստանի Հանրապետության մարզերում և Երևան քաղաքում հավաքներ իրականացնող քաղաքացիներին բերման ենթարկելու վերաբերյալ տվյալներ ստանալուց անմիջապես հետո, նրանց առաջին իրավաբանական օգնություն ցուցաբերելու նպատակով, ՀՀ փաստաբանների պալատը ձևավորել է արագ արձագանքման խումբ: Ինչպես նմանատիպ բոլոր նախորդ դեպքերում, հավատարիմ իրենց իրավապաշտպան գործունեությանը, արագ արձագանքման խմբում ընդգրկված փաստաբանները Ոստիկանության տարբեր բաժիններում առաջնային իրավաբանական օգնություն են ցուցաբերել բերման ենթարկված քաղաքացիներին[6]:

---

[5] *Տե՛ս հետևյալ հղումով՝ https://advocates.am/news/view/3820.html*

[6] *Տե՛ս հետևյալ հղումով՝ https://www.advocates.am/news/view/3874.html*

➢ ՓԱՍՏԱԲԱՆՈՒԹՅԱՆ 106-ԱՄՅԱԿԻՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԸ ՀԱՄԱԼՐՎԵՑ 106 ԱՆԴԱՄՈՎ

2024 թվականի դեկտեմբերի 6-ին փաստաբանական համայնքը տոնեց մասնագիտական օրն ու Հայաստանում փաստաբանության հիմնադրման 106-ամյակը:

Միջոցառումը մեկնարկեց Հայաստանի Հանրապետության օրհներգով:

Ողջույնի խոսքով հանդես եկան Փաստաբանների պալատի նախագահ Սիմոն Բաբայանը և Փաստաբանական ակադեմիայի ռեկտոր Արա Զոհրաբյանը:

Փաստաբանության 106-ամյակին, Փաստաբանների պալատի խորհրդի առաջ հանդիսավոր երդումից հետո, հավակնորդները ստացան փաստաբանական գործունեության արտոնագրեր:

Խորհրդանշական զուգադիպությամբ Փաստաբանների պալատը համալրվեց ևս 106 անդամով:

Փաստաբանների պալատի նախագահի կողմից պատվոգրերով և շնորհակալագրերով պարգևատրվեցին մի շարք գործընկերներ՝ փաստաբանության առջև ծառացած խնդիրների ու մարտահրավերների հաղթահարմանն ուղղված միջոցառումներին օժանդակելու, ինստիտուտի պաշտպանությանը նպաստելու, մասնագիտական աջակցություն ցուցաբերելու և հանրային պաշտպանությանն օժանդակելու համար[7]:

➢ ԱՇԽԱՏԱԺՈՂՈՎ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ԵՎ ԼՐԱԳՐՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ

2024 թվականի հուլիսի 6-ին և 7-ին ՀՀ փաստաբանների պալատը՝ ՄԱԿ զարգացման ծրագրերի հայաստանյան գրասենյակի (UNDP) հետ համագործակցությամբ, լրատվամիջոցների ներկայացուցիչների և փաստաբանների համար կազմակերպել է աշխատաժողով:

Աշխատաժողովին ներկա են եղել ՀՀ փաստաբանների պալատի նախագահ Սիմոն Բաբայանը, նախագահի տեղակալ Հարութ Ակլունցը, Փաստաբանների պալատի խորհրդի անդամներ, փաստաբաններ, ՄԱԶԾ

[7] *Տե՛ս հետևյալ հղումով՝ https://advocates.am/news/view/4154.html*

սահմանադրական բարեփոխումների ծրագրի պատասխանատու Աննա Հակոբյանը և զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչներ:

Բանախոսությամբ հանդես են եկել ՀՀ փաստաբանների պալատի նախագահ Սիմոն Բաբայանը, նախագահի տեղակալ Հարութ Ակլունցը, փաստաբան Արա Ղազարյանը, Վերաքննիչ քրեական դատարանի դատավոր Արսեն Նիկողոսյանը և «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ-ի համահիմնադիր Լիանա Դոյդոյանը:

Ի թիվս այլնի, քննարկվել են տեղեկատվության ազատությունը և տեղեկատվություն ստանալու սահմանափակումները, ապատեղեկատվության դեմ պայքարը, գործնական խնդիրները, խոսքի ազատության սահմանափակումները, պատվի, արժանապատվության (զրպարտությունից) պաշտպանությունը, Փաստաբանների պալատի, Հանրային պաշտպանի գրասենյակի, փաստաբանների հետ ՋԼՄ-ների համագործակցության առանձնահատկությունները:

Աշխատաժողովը տեղի է ունեցել Ծաղկաձոր քաղաքում՝ Նորվեգիայի Արտաքին գործերի նախարարության ֆինանսավորմամբ[8]:

➢ ՀԱՆԴԻՊՈՒՄ ԼՐԱՏՎԱՄԻՋՈՑՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ՀԵՏ

2024 թվականի դեկտեմբերի 20-ին Փաստաբանների պալատի նախագահ Սիմոն Բաբայանը, նախագահի առաջին տեղակալ Հարութ Ակլունցը, խորհրդի անդամներ Կարեն Մեժլումյանը և Հարություն Հարությունյանը հանդիպում են ունեցել զանգվածային լրատվության միջոցների գործընկերների հետ:

Հանդիպումն անցել է թեյի սեղանի շուրջ՝ ոչ պաշտոնական ձևաչափով:

Ողջունելով լրագրողներին՝ Սիմոն Բաբայանը նշել է, որ հատուկ է ընտրվել հանդիպման այս ձևաչափը, որպեսզի անկաշկանդ զրույցի ընթացքում հնարավոր լինի հասկանալ փաստաբանական համայնքի հետ համագործակցության շրջանակներում հանդիպող խնդիրները և դրանց համար անհրաժեշտ լուծումները, որոնք կնպաստեն համագործակցության զարգացմանը:

Փաստաբանների պալատի նախագահը մեդիայի գործընկերներին է ներկայացրել 2024 թվականի ընթացքում Պալատի կողմից կատարված մի շարք աշխատանքներ: Նա նաև խոսել է փաստաբանական համայնքի առաջ ծառացած խնդիրների մասին, մասնավորապես փաստաբանների հարկային բեռի ավելացման և անվճար իրավաբանական օգնության սահմանափակման, որի հետևանքով վնասվելու է Հայաստանում մարդու իրավունքների պաշտպանությունը:

[8] *Տե՛ս հետևյալ հղումով՝ https://advocates.am/news/view/3976.html*

Հանդիպման ընթացքում փաստաբանական և լրագրողական համայնքի ներկայացուցիչները քննարկել են ոլորտային ամենատարբեր թեմաներ:

Իր եզրափակիչ խոսքում Սիմոն Բաբայանը զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչներին շնորհակալություն է հայտնել փաստաբանական ինստիտուտին վերաբերելի թեմաները, փաստաբանական համայնքի խնդիրները պատշաճ լուսաբանելու և Պալատի հետ իրականացվող համագործակցության համար[9]:

➢ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- 2024 թվականի հունվարի 28-ին Հայոց բանակի կազմավորման 32-րդ տարեդարձի առթիվ Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի, Փաստաբանական ակադեմիայի և Հանրային պաշտպանի գրասենյակի ներկայացուցիչներն այցելել են **«Եռաբլուր» զինվորական պանթեոն**: Փաստաբանները խնկարկել և ծաղիկներ են խոնարհել նահատակված հերոսների սխրանքները հավերժացնող հուշակոթողին և շիրիմներին՝ հարգելով նրանց հիշատակը[10]:
- 2024 թվականի օգոստոսի 13-ին Փաստաբանական համայնքի ներկայացուցիչներն այցելել են **փաստաբան Կարեն Լևոնյանի որդու՝ Արցախյան երկրորդ պատերազմում նահատակված Լևոն Լևոնյանի անունը կրող պուրակ՝** նշելու հերոսի երկնային ծնունդը և ծաղիկներ խոնարհելու նրա հիշատակը հավերժացնող խաչքարի մոտ[11]:
- Հայրենիքի պաշտպանության համար՝ փաստաբանների ընտանիքների զոհված անդամների հիշատակը հարգելու նպատակով, 2024 թվականի հոկտեմբերի 17-ին ՀՀ փաստաբանների պալատի ներկայացուցիչներն այցելել են **փաստաբան Մաի Հակոբյանի որդու՝ Հրաչիկ Ավետիսյանի և փաստաբան Խաչիկ Դանիելյանի որդու՝ Միքայել Դանիելյանի շիրիմներին** (Եռաբլուր)[12]:
- 2024 թվականի ապրիլի 24-ին ՀՀ փաստաբանների պալատի ներկայացուցիչները Փարիզի և Օ դը Սենի փաստաբանների միությունների պատվիրակության՝ Փարիզի փաստաբանների միության նախագահ Պիեռ Հոֆֆմանի, Օ դը Սենի փաստաբանների միության նախագահ Իզաբել Կլամե

[9] *Տե՛ս հետևյալ հղումով՝ https://advocates.am/news/view/4130.html*
[10] *Տե՛ս հետևյալ հղումով https://www.advocates.am/news/view/3777.html*
[11] *Տե՛ս հետևյալ հղումով՝ https://www.advocates.am/news/view/4010.html*
[12] *Տե՛ս հետևյալ հղումով՝ https://www.advocates.am/news/view/4050.html*

Դի Լամանի և փաստաբաններ Վենսան Նիոդեի, Ֆաբիեն Առաքելյանի, Քրիսթիան Ֆեղալ-Շուլի և Միշել Գիշաղի հետ այցելել են **Ծիծեռնակաբերդի հուշահամալիր**[13]:

• ՀՀ փաստաբանների պալատը 2024 թվականին ևս իրականացրել է Երևանում **«Մայր Թերեզայի քույրեր»** միսիոներների բարեգործական կազմակերպության մանկատանն աջակցության նախաձեռնությունը:

Նախաձեռնության շրջանակներում 2024 թվականի դեկտեմբերի 27-ին Ամանորի և Սուրբ Ծննդյան տոների կապակցությամբ, ՀՀ փաստաբանների պալատի աշխատակազմը, ՀՀ փաստաբանական ակադեմիայի աշխատակազմը, փաստաբաններ և քաղաքացիներ այցելել են մանկատուն և մանկատան երեխաների համար փոխանցել անհրաժեշտ պարագաները[14]:

[13] *Տե՛ս հետևյալ հղումով՝* https://www.advocates.am/news/view/3864.html
[14] *Տե՛ս հետևյալ հղումով՝* https://www.advocates.am/news/view/4138.html

V. ՓԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՕՊՏԻՄԱԼ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ԽԹԱՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԸՆԴԼԱՅՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆ

Փաստաբանական ծառայությունների մատուցման շուկայում իրականացված ուսումնասիրությունները փաստել են, որ առկա է փաստաբանների զբաղվածությանն աջակցելու անհրաժեշտություն՝ հատկապես երիտասարդ և մարզաբնակ փաստաբանների շրջանում: Հաշվի առնելով նշված հանգամանքը ՀՀ փաստաբանների պալատը ձեռնամուխ է եղել ստեղծել փաստաբանական ծառայությունների պահանջարկ ունեցող տնտեսվարողների էլեկտրոնային հարթակ, ինչպես նաև փաստաբանի աշխատուժի պահանջարկ ունեցող փաստաբանական գրասենյակների հարթակ, որի միջոցով հնարավոր կլինի ապահովել կապն աշխատանք փնտրող փաստաբանների և փաստաբանական գրասենյակների, ինչպես նաև փաստաբանների և տնտեսվարող սուբյեկտների միջև:

Ի թիվս այլնի՝ նաև նշված գաղափարն իրագործելու համար ՀՀ փաստաբանների պալատը նախաձեռնել է Փաստաբանների պալատի նոր կայքէջի ստեղծումը, որը պետք է ներառի նոր գործիքակազմեր՝ թափուր աշխատատեղերի վերաբերյալ հայտարարություններ տեղադրելու, փաստաբանական հանրությանը հասու դարձնելու համար:

Հաշվետու ժամանակահատվածում այս ուղղությամբ շարունակվել են մասնագիտական քննարկումները: Քննարկումների արդյունքում պարզվել է արդի ռեսուրսների ու դրանց օպտիմալ օգտագործման հնարավորությունների, էլեկտրոնային հարթակի ստեղծման համար անհրաժեշտ ժամկետների, գործիքակազմերի, մի շարք այլ առանցքային հարցեր վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվությունը:

Այս ուղղությամբ նախորդ տարիներին մեկնարկած աշխատանքները շարունակել են նաև 2024 թվականի ընթացքում:

Էլեկտրոնային հարթակի ստեղծման ուղղությամբ իրականացվող աշխատանքներին զուգահեռ, այդ թվում՝ նաև փաստաբանների զբաղվածությունը խթանելու նպատակով, ՀՀ փաստաբանների պալատը 2024 թվականին հայտարարել և անց է կացրել հանրային պաշտպանների թափուր հաստիքները համալրելու նպատակով մրցույթ: Մրցույթ է հայտարարվել նաև 2024 թվականին Հանրային պաշտպանի գրասենյակին տրամադրված նոր 15 հաստիքները համալրելու նպատակով: Մրցույթում հաղթող ճանաչված և հանրային պաշտպանի թեկնածությունների ցուցակում ընդգրկված փաստաբանները նշանակվել են Հանրային պաշտպանի գրասենյակի թափուր հաստիքներում:

Ինչպես նախկինում, այնպես էլ 2024 թվականին հայտարարություններ են տարածվել երիտասարդ փաստաբաններին ՀՀ փաստաբանների պալատում գտնվող աշխատասենյակից անվճար օգտվելու հնարավորություն տրամադրելու վերաբերյալ: Դիմորդներն ապահովվել են բնականոն աշխատանքի իրականացման համար անհրաժեշտ բոլոր պայմաններով: Հանրային պաշտպանի գրասենյակի ղեկավարի համապատասխան որոշումներով, վերջիններիս հանձնարարվել է նաև Հանրային պաշտպանի գրասենյակի շահառուների գործերի վարումը:

Փաստաբանին դիմելու իրավական մշակույթի բարձրացմանը նպաստել են նաև ՀՀ փաստաբանների պալատի կողմից հաշվետու ժամանակահատվածում կազմակերպված անվճար իրավաբանական օգնության տրամադրման հետ կապված միջոցառումները:

VI. ՀԱՆՐԱՅԻՆ ՊԱՇՏՊԱՆԻ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԶԱՐԳԱՑՈՒՄ

Ինչպես նախորդ տարիներին, այնպես էլ՝ 2024 թվականին, ՀՀ փաստաբանների պալատի հանրային պաշտպանի գրասենյակը **(այսուհետ, նաև՝ Գրասենյակ),** գործերի աննախադեպ աճի պայմաններում, շարունակել է անխափան ապահովել «Փաստաբանության մասին» օրենքի **(այսուհետ, նաև՝ Օրենք)** 41-րդ հոդվածով նախատեսված՝ անձանց անվճար իրավաբանական օգնության տրամադրումը:

Հանրային պաշտպանների ծանրաբեռնվածության հարցը իրավասու պետական մարմիններին ներկայացնելուն զուգահեռ, այն ներկայացվում է միջազգային կազմակերպություններին՝ դրամաշնորհային ծրագրերի շրջանակներում, օժանդակ գործիքներով առկա իրավիճակը մեղմելու համար:

Գերծանրաբեռնվածությունը թոթափելու նպատակով, 2024 թվականի երկրորդ կիսամյակից հետո Գրասենյակին հատկացվել է 15 նոր հաստիք, որոնց տեղաբաշխման արդյունքում՝ 70 հաստիք նախատեսվել է քրեական, իսկ 14-ը՝ քաղաքացիական գործերը սպասարկելու համար: Նշված հաստիքների ավելացմամբ թեև չի լուծվել հանրային պաշտպանների գերծանրաբեռնվածության հարցը, այնուամենայնիվ յուրաքանչյուր հանրային պաշտպանին ընկնող գործերի աճի քանակը մեղմվել է:

Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի դեկտեմբերի 28-ի N 2323-Ն որոշման մեջ հաստիքների ավելացման փոփոխություններ կատարելու անհրաժեշտությունը հիմնավորվել է Կառավարության 2021 թվականի նոյեմբերի 18-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2021-2026 թվականների գործունեության միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» թիվ 1902-Լ որոշման հավելված N 1-ում ամրագրված՝ փաստաբանության ոլորտի զարգացման նպատակով (10.1.2 ենթակետ) Հանրային պաշտպանների ծանրաբեռնվածությունը մինչև 30 տոկոսով թեթևացնելու, ինչպես նաև Կառավարության 2022 թվականի հուլիսի 29-ի թիվ 1133-Լ որոշմամբ հաստատված «ՀՀ դատական և իրավական բարեփոխումների 2022-2026 թվականների ռազմավարությամբ» ամրագրված հանրային պաշտպանների ծանրաբեռնվածությունը նվազեցնելու անհրաժեշտությամբ:

Առաջարկվող փոփոխության անհրաժեշտությունը պայմանավորված է եղել Սահմանադրությամբ և օրենքներով երաշխավորված իրավաբանական օգնության տրամադրման շարունակական ապահովման անհրաժեշտությամբ, քանի որ շարունակաբար աճող աշխատանքի ծավալների պայմաններում, անհնարին կարող է դառնալ պատշաճ և որակյալ իրավաբանական օգնության ապահովումը:

Գրասենյակի գործերի քանակի նման աճին նպաստել են մի շաք գործոններ, որոնցից են՝

- *քրեական վարույթներով մի շարք գործողություններին պաշտպանի*

պարտադիր ներգրավման անհրաժեշտությունը,

- *հանցագործությունների թվի, հետևապես և/կամ վարույթն իրականացնող մարմինների կողմից քննված քրեական գործերի աճը,*
- *օրենսդրական լրացումների արդյունքում Գրասենյակի շահառուների ցանկի համալրումը,*
- *2023 թվականի սեպտեմբերի 19-ից հետո Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված փախստականների բազմաբնույթ իրավական խնդիրները,*
- *Գրասենյակի գործունեության վերաբերյալ հանրային իրազեկվածությունը և հանրության իրավագիտակցության բարձրացումը,*
- *հանրային պաշտպանների մասնագիտական պատրաստվածության բարելավումն ու Գրասենյակի նկատմամբ վստահության աճը:*

2024 թվականին առավել ակնառու դարձավ նաև հանրային պաշտպանների աշխատավարձի խնդիրը, քանի որ օրենսդրորեն դրա չափը, թեպետ հավասարեցված է Երևան քաղաքի ավագ դատախազի աշխատավարձի դրույքաչափին, սակայն փաստացի, գրեթե կրկնակի զիջում է նշված պաշտոնին նշանակված անձանց վարձատրության չափին, քանի որ վերջիններիս, ի տարբերություն հանրային պաշտպանների վճարվում են նաև հավելավճարներ:

Օրենսդրական փոփոխությունների արդյունքում, «Փաստաբանության մասին» օրենքով, սահմանվեց հանրային պաշտպանների արտաժամյա աշխատանքի դիմաց վճարման կարգավորումը, որը որոշ չափով մեղմեց, սակայն ամբողջապես չլուծեց առկա խնդիրը:

Հարկ է ընդգծել նաև, որ Գրասենյակի ծանրաբեռնվածությունն արտացոլվում է 2024 թվականի ընթացքում Գրասենյակում հաշվառված փաստաթղթաշրջանառությամբ, որն ունի հետևյալ պատկերը՝

- *մուտքագրվել է **42055 դիմում**,*
- *ելքագրվել է **19271 գրություն**,*
- *շրջանառվել է **3843 ներքին գրություն**:*

➢ ՀԱՆՐԱՅԻՆ ՊԱՇՏՊԱՆԻ ՀԱՍՏԻՔՆԵՐԻ ՎԱՐՉԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՏԵՂԱԲԱՇԽՈՒՄԸ.

Գրասենյակի նստավայրերը տեղեկայված են Երևան քաղաքում և թվով 19

խոշոր քաղաքային բնակավայրերում, որոնք սպասարկում են հանրապետության ամբողջ տարածքը:

Մարզային նստավայրերի տարածքները հիմնականում վարձակալվում են, որը լրացուցիչ ֆինանսական բեռ է ստեղծում Գրասենյակի համար: Միայն Արարատի և Կոտայքի մարզպետարանների նստավայրերում, վերջիններիս հետ համագործակցության արդյունքում՝ տրամադրվել են աշխատասենյակներ:

Ինչպես Երևան քաղաքում, այնպես էլ Հայաստանի Հանրապետության մարզերում, անվճար իրավաբանական օգնության տրամադրման արդյունավետությունն ապահովելու նպատակով, հանրային պաշտպանների հաստիքները տեղաբաշխվել են վարչատարածքային սկզբունքով՝ ըստ մարզերի, ինչպես նաև ըստ մասնագիտացման (քրեաիրավական, քաղաքացիաիրավական), դատարանների նստավայրերի, վարույթն իրականացնող մարմինների, քրեակատարողական հիմնարկների և գործերի քանակի հաշվառմամբ, հաշվի առնելով նաև շահերի բախման առաջացման հնարավոր վտանգը:

Հաշվետու տարվա ընթացքում նախատեսված հանրային պաշտպանի 84 հաստիքները բաշխվել են հետևյալ կերպ.

- ***Գրասենյակի Երևան քաղաքի նստավայրը սպասարկվել է 40 հանրային պաշտպանի կողմից, որից՝ 31-ը քրեաիրավական մասնագիտացմամբ, իսկ 9-ը՝ քաղաքացիաիրավական,***

- ***44 հաստիքները բաշխվել են Գրասենյակի մարզային նստավայրերի միջև:***

Հանրային պաշտպանների հաստիքների վերաբաշխումը կատարվում է ըստ անհրաժեշտության՝ հաշվի առնելով գործերի քանակական, ինչպես նաև վարույթն իրականացնող մարմինների նստավայրերի փոփոխությունները:

Կախված համապատասխան մարզում և/կամ քաղաքում անվճար իրավաբանական օգնության պահանջարկից, նախատեսվել է հանրային պաշտպանի ոչ միայն լրիվ (ամբողջական), այլ նաև 0,5 և 0,25 դրույքաչափերով հաստիքներ:

Մարզում հանրային պաշտպանի մեկ հաստիքի մասնատումը՝ 0,5, իսկ որոշ դեպքերում նաև՝ 0,25 դրույքների, հնարավորություն է ընձեռել առավել արդյունավետ կառավարել հանրային պաշտպանի աշխատաժամանակը, ինչպես նաև՝ ապահովել անվճար իրավաբանական օգնության տրամադրումը ոչ միայն մարզկենտրոնում, այլ նաև՝ մյուս բնակավայրերում:

Հանրային պաշտպանների համար հատկացված 84 հաստիքների բաղդատման արդյունքում, հաշվետու տարվա ավարտին, այդ հաստիքները

զբաղեցվել են շուրջ 111 հանրային պաշտպանի կողմից:



➢ ՀԱՆՐԱՅԻՆ ՊԱՇՏՊԱՆԻ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ ՄԱՐԶԱՅԻՆ ՆՍՏԱՎԱՅՐԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

Մարզերում անվճար իրավաբանական օգնության հասանելիությունը և արդյունավետությունը բարձրացնելու նպատակով՝ մարզերը սպասարկող հանրային պաշտպանների հետ կնքվել են՝ նրանց պատկանող ավտոմեքենաները Գրասենյակի կարիքների համար անհատույց օգտագործելու վերաբերյալ պայմանագրեր: Գրասենյակի կարիքների համար օգտագործելով հանրային պաշտպաններին անձնական ավտոմեքենաները՝ Գրասենյակը փաստացի փոխահատուցում է միայն վառելիքի ծախսերը, որոնց հատուցման համար, յուրաքանչյուր առանձին դեպքում, հանրային պաշտպանները ներկայացնում են համապատասխան փաստաթղթային հիմնավորումներ, որոնք անցնում են ստուգման ընթացակարգով:

Մարզերում իրավաբանական օգնության պատշաճ որակն ապահովելու

նպատակով, այդ տարածաշրջանը սպասարկող հանրային պաշտպանները պարտադիր մասնակցում են Փաստաբանների պալատի կողմից իրականացվող վերապատրաստման դասընթացներին, ինչպես նաև՝ մասնակից են դարձվում հանրային պաշտպանների մասնագիտական հմտությունները զարգացնելու նպատակով՝ տարբեր հասարակական և միջազգային կազմակերպությունների հետ համագործակցությամբ հանրային պաշտպանների համար կազմակերպվող առանձին խումբ անձանց իրավունքների պաշտպանության վերաբերյալ թիրախային դասընթացներին, անձնական կարողությունների զարգացման ծրագրերին և մասնագիտական քննարկումներին:

Տրամադրվող անվճար իրավաբանական օգնության որակի վերահսկողության նպատակով Գրասենյակի ղեկավարը, պարբերաբար այցելում է Գրասենյակի մարզային նստավայրեր: Այցելություններ է իրականացնում նաև Փաստաբանների պալատի նախագահը:

Գրասենյակի մարզային նստավայրերի հասցեներին կարելի է ծանոթանալ ստորև ներկայացված աղյուսակում:

Արարատի մարզ

- Ք.Մասիս, Հերացու փող. 11/11
- Ք.Արտաշատ, Օգոստոսի 23 փող., 60 շենք, 1-ին հարկ

Արմավիրի մարզ

- Ք.Արմավիր, Հանրապետության փող., 28, 1-ին հարկ
- Ք.Վաղարշապատ, Վ.Կոստանյան փող. 5/56

Կոտայքի մարզ

- Նաիրի համայնք, Եղվարդ քաղաք, Ե.Չարենցի փող., թիվ 39/1
- Ք.Աբովյան, Երիտասարդական փող., 5/3, 5/5/1,
- Ք.Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1 (համայնքապետարանի վարչական շենք, 2-րդ հարկ)
- Ք.Չարենցավան, Խանջյան փող. 1շ., 3-րդ հարկ, 4-րդ սենյակ

Արագածոտնի մարզ

- Ք.Աշտարակ, Ակադեմիկոս Ղափանցյան փող., 2/4-2/5

Վայոց Ձորի մարզ

- , Ք.Եղեգնաձոր, Անդրանիկի փող. 12/4

Շիրակի մարզ

- Ք.Գյումրի, Անկախության հրապարակ 9, 2-րդ հարկ

Լոռու մարզ

- Ք.Վանաձոր, Միյասնիկյան փող., 6/37

Տավուշի մարզ

- Ք.Դիլիջան, Մյասնիկյան փող. 55 (համայնքապետարանի վարչական շենք, առաջին հարկ)

Սյունիքի մարզ

- Ք.Գորիս, Մ.Մաշտոցի 3 փող., թիվ 2 վարչական շենք 2-րդ հարկ
- Ք.Կապան, Արամ Մանուկյան փող., 1ա/19
- Ք.Սիսիան, Իսրայելյան փող., 35/1 շենք, 1-ին հարկ

Գեղարքունիք ի մարզ

- Ք.Գավառ, Սայադյան փող. 15
- Ք.Սևան, Աբովյան փող. թիվ 2/2
- Ք.Մարտունի, Գ.Նժդեհի փող. 12

➢ ՀԱՆՐԱՅԻՆ ՊԱՇՏՊԱՆԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՆՑՆԵԼՈՒ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՆՔՈՒՄ ԵՎ ԵՐԿԱՐԱՁԳՈՒՄ

Փաստաբանը հանրային պաշտպան կարող է նշանակվել հետևյալ կերպ՝

- Մրցույթային կարգով,
- Գրասենյակի ղեկավարի ներկայացմամբ (առաջարկով):

Հանրային պաշտպանի հետ աշխատանքային պայմանագիրը կնքվում է մեկ տարի ժամկետով: Առանց մրցույթի անցկացման՝ հանրային պաշտպանի հետ կնքված աշխատանքային պայմանագրի մեկամյա ժամկետը կարող է յուրաքանչյուր անգամ երկարաձգվել ևս մեկ տարով, եթե հանրային պաշտպանը փաստաբանների պալատի խորհրդի սահմանած կարգով և չափանիշներին համապատասխան, հանրային պաշտպանների գործունեության ստուգման և գնահատման արդյունքներով՝ ստացել է համապատասխան անցողիկ միավորը:

2014 թվականից սկսած[15] հանրային պաշտպանների հաստիքների համալրումն հիմնականում իրականացվում է մրցութային կարգով[16], ինչը նպատակ է հետապնդում, նախ և առաջ, ապահովել հանրային պաշտպան դառնալու գործընթացի թափանցիկությունը և օբյեկտիվ գնահատել հանրային պաշտպանի թեկնածուի մասնագիտական պատրաստվածությունը:

Հանրային պաշտպանի աշխատանքի անցնելու նպատակով անցկացվող մրցույթն իրականացվում է երկու փուլով՝

- ❖ գրավոր փուլ,
- ❖ բանավոր (հարցազրույց) փուլ:

Մրցույթի կազմակերպման և թեկնածուների աշխատանքների գնահատման համար յուրաքանչյուր տարի ստեղծվում է համապատասխան մրցութային հանձնաժողով, որն անցկացնում է մրցույթի ողջ ընթացքը և գնահատում քննական առաջադրանքները: Մրցույթի առաջադրանքն ընտրվում է թեկնածուների կողմից վիճակահանության միջոցով, իսկ առաջադրանքների գնահատման համար

[15] Հանրային պաշտպանների հաստիքների համալրման մրցութային կարգը ներդրվել է 2013 թվականի հոկտեմբերից, իսկ առաջին մրցույթն անց է կացվել 2014 թվականի հունվարին:

[16] Հանրային պաշտպանի թափուր հաստիքն արտամրցութային կարգով համալրվում է միայն այն դեպքում, երբ տվյալ հաստիքը մրցութային կարգով անցած թեկնածուներով համալրել հնարավոր չէ, օրինակ՝ երբ ՀՊԳ մարզային գրասենյակում առկա թափուր հաստիքի համալրման համար հայտարարված մրցույթին մասնակցելու համար որևէ թեկնածու չի դիմել:

մշակված համակարգը բացառում է գնահատման գործընթացում սուբյեկտիվ գործոնի ազդեցությունը:

Հաշվետու տարվա ընթացքում առաջացած թափուր հաստիքները ևս համալրվել են նախորդող տարիներին անցկացված մրցույթները հաղթահարած փաստաբաններով, իսկ մրցույթը հաղթահարած փաստաբանների ցուցակից փաստաբան ներգրավելու անհնարինության պայմաններում՝ Գրասենյակի ղեկավարի առաջարկով ներկայացված այլ փաստաբաններով:

2024 թվականի ընթացքում հանրային պաշտպանների թափուր հաստիքները համալրելու նպատակով անցակացված մրցույթին մասնակցել են թվով 23 փաստաբաններ, որոնցից 11-ը քրեաիրավական, իսկ 12-ը քաղաքացիաիրավական մասնագիտացմամբ: Գրավոր և բանավոր փուլերը հաղթահարած 7 փաստաբաններից 4-ի հետ կնքվել են աշխատանքային պայմանագրեր, իսկ մյուս փաստաբանները գրանցվել են հանրային պաշտպանի թեկնածուների ցուցակում:

Մինչև մրցույթի անցակացումը, հաշվի առնելով հանրային պաշտպանի թեկնածուների ցուցակում հավակնորդների բացակայությունը, Պալատի կողմից հաշվետու տարվա ընթացքում ընդունվել են հայտեր՝ արտամրցութային կարգով թափուր հաստիքները համալրելու նպատակով[17]:

2015 թվականից Փաստաբանների պալատում գործում է հանրային պաշտպանի մասնագիտական պատրաստվածության և արդյունավետության գնահատման համակարգ, որն ապահովում է Գրասենյակում առանց մրցույթի անցկացման հանրային պաշտպանի հետ կնքված աշխատանքային պայմանագրի մեկամյա ժամկետը ևս մեկ տարով երկարաձգելու համար հանրային պաշտպանի մասնագիտական պատրաստվածության և աշխատանքի արդյունավետության գնահատման չափորոշիչները և գնահատման ընթացակարգը:

Հաշվետու ժամանակահատվածում գործող հանրային պաշտպաններից յուրաքանչյուրի աշխատանքն, ըստ հրահանգով սահմանված միավորների, գնահատվել է ընդհանուր չափորոշիչներով, որոնց շրջանակներում հաշվի են առնվել հանրային պաշտպանի կողմից օրենքով նախատեսված վերապատրաստման դասընթացներին մասնակցած լինելը, «Փաստաբանության մասին» օրենքի կամ Փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջների խախտման համար կարգապահական տույժի ենթարկված չլինելը, աշխատանքային կարգապահության

[17] *Տե՛ս հետևյալ հղումներով՝ https://advocates.am/news/view/3849.html https://advocates.am/news/view/3954.html*

խախտման համար տույժի ենթարկված չլինելը, հանրային պաշտպանի գրասենյակի կանոնակարգով փաստաբանական վարույթին վերաբերվող պահանջները կատարած լինելը:

Հանրային պաշտպանի աշխատանքը գնահատվում է նաև ըստ հանրային պաշտպանի մասնագիտական ուղղվածության (քրեական ու քաղաքացիական և վարչական) չափորոշիչների:

Քրեական ուղղվածության հանրային պաշտպանների աշխատանքը գնահատվում է հաշվի առնելով հանրային պաշտպանի վարած գործերով արդարացումների (լրիվ կամ մասնակի), ինչպես նաև արդարացնող և ոչ արդարացնող հիմքով դադարեցված քրեական հետապնդման, կարճված վարույթների թիվը, օրենքով նախատեսվածից ավելի մեղմ պատիժ նշանակելու կամ պատիժը պայմանականորեն չկիրառելու, ավելի մեղմ հոդվածով կամ հոդվածի մասով վերաորակելու, սանկցիայով նախատեսված նվազ խիստ պատիժ նշանակելու թիվը, անչափահասի նկատմամբ դաստիարակչական բնույթի հարկադրանքի միջոցների նշանակելու թիվը, վերջնական դատական ակտի դեմ բերված վերաքննիչ և /կամ/ վճռաբեկ բողոքների թիվը, ինչպես նաև մեղադրանքի կողմի բերած՝ մերժված վերաքննիչ և /կամ/ վճռաբեկ բողոքների թիվը, վերջնական դատական ակտի դեմ բերված լրիվ կամ մասնակի բավարարված վերաքննիչ և /կամ/ վճռաբեկ բողոքների թիվը, որպես կալանավորման այլընտրանքային խափանման միջոց դատարանի կողմից գրավ ընտրելու, որպես խափանման միջոց ընտրված կալանքը մեկ այլ խափանման միջոցով փոխարինելու թիվն ու այլ չափորոշիչներ:

Քաղաքացիական և վարչական ուղղվածության հանրային պաշտպանների գործունեությունը գնահատվում է հաշվի առնելով հանրային պաշտպանի վարչական մարմին և /կամ/ դրա վերադաս մարմնին ուղղված դիմումների, բողոքների, կատարված հարցումների թիվը, վարչական մարմնի և /կամ/ դրա վերադասի կողմից բավարարված վարչական բողոքների թիվը, կազմված հայցադիմումների, դիմումների թիվը, հօգուտ վստահորդի կայացված վերջնական դատական ակտերերի, միջանկյալ դատական ակտի դեմ բերված վերաքննիչ և /կամ/ վճռաբեկ բողոքների թիվը, վերջնական դատական ակտի դեմ բերված վերաքննիչ և /կամ/ վճռաբեկ բողոքների թիվը, վերջնական դատական ակտի դեմ լրիվ կամ մասնակի բավարարված վերաքննիչ և /կամ/ վճռաբեկ բողոքների թիվը և այլ չափորոշիչներ:

Պարբերաբար լրամշակվել և լրացվել է նաև հանրային պաշտպանների

աշխատանքի գնահատման «Էլեկտրոնային հանրային պաշտպան» էլեկտրոնային ծրագրի գործիքակազմը:

➢ ԱՆՎՃԱՐ ԻՐԱՎԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԲԱՐՁՐԱՑՈՒՄ ԵՎ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑԱԿԱՐԳԵՐԻ ՄՇԱԿՈՒՄ ԵՎ ՆԵՐԴՐՈՒՄ.

Հաշվետու տարվա ընթացքում, Գրասենյակում իրականացվել են շարունակական աշխատանքներ՝ մատուցվող ծառայությունների որակը հետզհետե բարձրացնելու, հանրային պաշտպանների հմտություններն ու գիտելիքները բազմաոլորտ զարգացնելու, նոր մեթոդաբանության և գործիքակազմ ներդնելու ուղղությամբ: Շարունակաբար բարելավվել է ներքին վարչարարությունը և վերահսկողությունը, ինչպես նաև Գրասենյակի գործունեության թափանցիկությունը:

Մատուցվող ծառայությունների որակը բարձրացնելու նպատակով Գրասենյակում ներդրված են հսկողության և վերահսկողության ճկուն մեխանիզմներ: Մասնավորապես, հանրային պաշտպանների կատարած աշխատանքի նկատմամբ անմիջական հսկողություն են իրականացնում Գրասենյակի ղեկավարը և նրա տեղակալները: Ընդհանուր հսկողությունը գրասենյակի գործունեության նկատմամբ իրականացնում է Պալատի նախագահը: Վերջինիս, այդ հարցում օժանդակում է Պալատի նախագահի տեղակալը և հանրային պաշտպանի գրասենյակի մշտադիտարկման խումբը:

Անվճար իրավաբանական օգնության տրամադրման սահմանված ընթացակարգերի պահանջների կատարման նկատմամբ վերահսկողությունն ապահովելու անհրաժեշտությամբ պայմանավորված՝ մշտադիտարկման խումբն իրականացնում է հանրային պաշտպանների կողմից վարվող գործերի վերաբերյալ Գրասենյակի էլեկտրոնային տեղեկատվական համակարգում առկա տվյալների ստուգում, անճշտությունների վերհանում, դատական նիստերի դիտարկում, հանրային պաշտպանների կողմից դատական նիստերին առանց հարգելի պատճառների չներկայանալու դեպքերի հայտնաբերում, փաստաբանական վարույթներին ներկայացվող պարտադիր պահանջների ստուգում, վստահորդների հետ տարվող աշխատանքների որակի գնահատում:

Այսպես, հաշվետու տարվա ընթացքում մշտադիտարկման խումբը հարցաթերթիկ լրացնելու է հրավիրել ընդհանուր 543 շահառուի և ստացել նրանց կարծիքներն ու նկատառումները: Գոհունակության արտահայտելուն զուգահեռ՝ 68 դեպքում շահառուները ներկայացրել են նաև առաջարկներ և նկատառումներ:

Հանրային պաշտպանների մասնակցությամբ դատական նիստերի մշտադիտարկման նպատակով հաշվետու տարվա ընթացքում խումբը կատարել է ընդհանուր առմամբ 126 չհայտարարված այց: 86 դեպքում՝ կազմվել է այցի արդյունքներն ամփոփող արձանագրություն, 40 դեպքում՝ նիստ չկայանալու պատճառով կազմվել են տեղեկանքներ: Ընդ որում, նշված բոլոր դեպքերում բազմակողմանի և մանրամասն ուսումնասիրվել են դատական նիստը չկայանալու հիմքերը՝ դրանց պատճառը հանրային պաշտպանի բացակայության հանգամանքը ստուգելու նպատակով:

Հանրային պաշտպանի գրասենյակում գործող էլեկտրոնային տեղեկատվական համակարգում վարվող գործերի ընթացքի վերաբերյալ հանրային պաշտպանների կողմից կատարվող նշագրումները պարզելու նպատակով հաշվետու տարվա ընթացքում մշտադիտարկման խումը կատարել է բազմաթիվ թեմատիկ և ընտրանքային ստուգումներ: **Ընդհանուր առմամբ ուսումնասիրությունները ներառել են 16442 վարույթի վերաբերյալ տվյալների ստուգում:**

Գրասենյակի կողմից ցուցաբերվող իրավաբանական օգնության որակի վերահսկողության նպատակներով 2024 թվականի վերջում իրականացվել է հանրային պաշտպանների կատարած աշխատանքի արդյունավետության գնահատում՝ որակական և քանակական չափանիշներով: Հարկ է նկատել, որ գնահատումը կատարվում է էլեկտրոնային համակարգի կողմից ինքնաշխատ կերպով գեներացվող ամփոփաթերթի հիման վրա: Ընդ որում, ամփոփաթերթերի հիմքում ընկած տվյալներն առաձնին ստուգվել են մշտադիտարկման խմբի կողմից, ընդհանուր ստուգվել է 2353 տվյալ:

Հանրային պաշտպանների միջև առողջ մրցակցային մթնոլորտ ձևավորելու, մատուցվող ծառայությունների արդյունավետությունը բարձրացնելու նպատակով, գնահատման արդյունքներով, հաշվետու տարվա ընթացքում նվազ արդյունավետություն ցուցաբերած թվով վեց հանրային պաշտպանների հետ աշխատանքային պայմանագրերը չի երկարաձգվել և, այդ հաստիքները, ինչպես նաև մյուս թափուր հաստիքները համալրելու նպատակով իրականացվել է մրցույթ:

➢ ՀԱՆՐԱՅԻՆ ՊԱՇՏՊԱՆՆԵՐԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՐԱԿՆԵՐԻ ԲԱՐՁՐԱՑՈՒՄ ԵՎ ՇԱՐՈՒՆԱԿԱՆ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄՆԵՐԻ ԱՊԱՀՈՎՈՒՄ

Վերապատրաստման պարտադիր դասընթացներին զուգահեռ, հանրային պաշտպանների մասնագիտական հմտությունները զարգացնելու նպատակով, տարբեր հասարակական և միջազգային կազմակերպությունների հետ համագործակցությամբ հանրային պաշտպանների համար կազմակերպվել են առանձին խումբ անձանց իրավունքների պաշտպանության վերաբերյալ դասընթացներ, անձնական կարողությունների զարգացման ծրագրեր և մասնագիտական քննարկումներ:

ՀՀ փաստաբանների պալատի և ՄԱԿ-ի փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի գրասենյակի հայաստանյան ներկայացուցչության համատեղ իրականացվող ծրագրի շրջանակներում 2024 թվականի ընթացքում կազմակերպվել են մի շարք դասընթացներ: Այդ թվում՝

- 2024 թվականի հունիսի 29-30 իրականացվել է աշխատաժողով Աղվերանում՝ Հայաստանի Հանրապետությունում ՄԱԿ-ի փախստականների հարցերով գլխավոր հանձնակատարի ներկայացուցչության (UNHCR կամ ՄԱԿ ՓԳՀ) հետ համագործակցությամբ իրականացվող «Իրավաբանական աջակցություն բռնի տեղահանված անձանց» ծրագրի շրջանակներում:
- 2024 թվականի հոկտեմբերի 19-ին և 20-ին Ծաղկաձորում տեղի է ունեցել աշխատաժողով հանրային պաշտպանների և ՄԱԿ –ի Փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի գրասենյակի հետ իրականացվող ծրագրի փաստաբանների համար:
- 2024 թվականի նոյեմբերի 16-17-ին Բյուրականում տեղի է ունեցել աշխատաժողով, որի ընթացքում քննարկվել են ապաստանի իրավունքի միջազգային և ներպետական հիմնական չափանիշներն ու սկզբունքները, ապաստանի վարույթը, ընթացակարգային առանձնահատկությունները, բողոքարկումը և այլ հարցեր:
- 2024 թվականի դեկտեմբեր 14-15-ին Աղվերանում աշխատաժողով է կազմակերպվել մարզերը սպասարկող քրեաիրավական

մասնագիտացմամբ հանրային պաշտպանների համար՝ ապաստանը և քրեական վարույթը թեմայով:

Հարկ է ընդգծել նաև, որ տարբեր ժամանակներում տարբեր ծրագրերով հանրային պաշտպանները, Գրասենյակի ղեկավարը և տեղակալները մասնակցել են աշխատաժողովների, առցանց դասընթացների, արտագնա սեմինար-քննարկումների՝ վերապատրաստումների շրջանակում, այդ թվում ՝ HELP «Փախստական և միգրանտ» երեխաները առցանց դասընթացին, Երևանում Եվրոպայի խորհրդի գրասենյակի կողմից կազմակերպված աշխատաժողովին «Մարդու սոցիալական իրավունքների ամրապնդումը Հայաստանում» ծրագրի շրջանակներում իրականացվող Եվրոպական սոցիալական խարտիայի կոնվերցիոն համակարգի և զեկույցների մեխանիզմների վերաբերյալ:

➢ ԱՆՎՃԱՐ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԱՅԼ ԱՆՁՆԱՑ ՆԵՐԳՐԱՎՈՒՄԸ.

Գրասենյակի կողմից 2024 թվականին նաև ձեռնարկվել են միջոցներ՝ անվճար իրավաբանական օգնության տրամադրմանը հանրային պաշտպան չհանդիսացող այլ փաստաբանների, ինչպես նաև այլ սուբյեկտների ներգրավելու ուղղությամբ:

2023 թվականի հունվար ամսին Գրասենյակի ղեկավարի և ՀՀ փաստաբանական ակադեմիայի կառավարման խորհրդի կողմից համատեղ սահմանված Հանրային պաշտպանի կողմից անվճար իրավաբանական օգնության տրամադրման գործընթացին փաստաբանական ակադեմիայի ունկնդիրների ներգրավման կարգի շրջանակում՝ հաշվետու ժամանակահատվածում, անվճար իրավաբանական օգնությունից օգտվել են 958 անձ:

Հանրային պաշտպան չհանդիսացող անվճար և կամավոր անհատույց իրավաբանական օգնություն տրամադրող փաստաբանների ցուցակում՝ 2024 թվականի ընթացքում ընդգրկվել է 20 փաստաբան:

Հատկանշական է նաև, որ հանրային պաշտպանությունում ներգրավվող հանրային պաշտպան չհանդիսացող փաստաբանների համար Փաստաբանների պալատի կողմից «Պրո Բոնո» ծրագրի շրջանակում տրամադրվում է աշխատասենյակ և անհրաժեշտ աշխատանքային պարագաներ, ինչն նույնպես նպաստում է փաստաբանների կողմից հանրային պաշտպանության նկատմամբ հետաքրքրություն

դրսևորելուն, որն էլ իր հերթին որոշակիորեն մեղմում է Գրասենյակի ծանրաբեռնվածությունը: Նշված հարթակը նաև հնարավորություն է ընձեռում երիտասարդ փաստաբաններին հաղթահարել մասնագիտական գործունեությունը սկսելու սկզբում առաջացող տեխնիկական և նյութական դժվարությունները:

VII. ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԱՆՎՃԱՐ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԻ ՆԵՐԴՐՈՒՄ

Ժամանակակից իրավունքի զարգացման միտումները վկայում են այն մասին, որ փաստաբանները ևս ունենում են մասնագիտական աջակցության կարիք: Առավել հաճախ մասնագիտական աջակցության, մասնավորապես՝ փորձի փոխանակման, համանման գործեր վարած ավելի փորձառու փաստաբանների հետ խորհրդակցելու կարիք են ունենում երիտասարդ և տարեց փաստաբանները:

Վերջիններիս այս հարցում աջակցելու նպատակով ՀՀ փաստաբանների պալատը 2024 թվականին ևս շարունակել է աշխատանքները ծրագրի իրականացման ուղղությամբ: Նշված ծրագիրը միտված է տարբեր միջոցառումներ կազմակերպելու եղանակով հիշյալ շրջանակի անձանց համար փորձի փոխանակման հարթակ ստեղծելուն:

Այս ծրագրի շրջանակներում ՀՀ փաստաբանների պալատում կազմակերպվել և անց են կացվել մի շարք հանդիպում-քննարկումներ, որոնց մասնակցել են փորձառու մասնագետներ: Հանդիպումների ընթացքում քննարկվել են թեմատիկ տարաբնույթ իրավական հարցեր:

2024 թվականի օգոստոսի 24-ին Նովոսիբիրսկի շրջանի Փաստաբանների պալատի հրավերով Փաստաբանների պալատի Երիտասարդական խորհրդի աջակցությամբ երիտասարդ փաստաբանները հնարավորություն են ստացել մասնակցել «Երիտասարդ փաստաբանների իրավաբանական ֆորումնին»:

Հաշվետու ժամանակահատվածում շարունակվել են Եվրոպայի երիտասարդ իրավաբանների ասոցիացիայի ու անդամ կառույցների հետ համագործակցությունը, որի շրջանակներում երիտասարդ փաստաբանները մասնակցել են տարբեր օնլայն միջոցառումների, այդ թվում՝ տարեկան ընդհանուր ժողովին:

Ապահովվել է երկու երիտասարդ փաստաբանի մասնակցությունը Եվրոպայի երիտասարդ իրավաբանների ասոցիացիայի կողմից կազմակերպվող՝ Մենթորության ծրագրին, որի ընթացքում հնարավորություն է տրվել հաղորդակցվել այլ երկրի փորձառու իրավաբանի հետ և ստանալ խորհրդատվություն:

Երկու կիսամյակներում իրականացվել է անվճար աշխատասենյակի մասին հայտարարությունների հրապարակում, հայտերի քննարկում, շահառուների ցուցակների հաստատում, ընթացքում նաև՝ լրացումներ:

VIII. ԱՆՎՃԱՐ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ (PRO BONO) ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԱՆՎՃԱՐ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐՈՂ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ԵՎ ՓԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԽՐԱԽՈՒՄՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՍԱՀՄԱՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆ

Հասարակությունը մշտապես ունեցել է անվճար իրավաբանական աջակցության կարիք: Հաշվի նստելով հասարակության պահանջմունքների հետ ՀՀ փաստաբանների պալատն իր համար առաջնային է համարել բոլոր միջոցներով իր անդամ յուրաքանչյուր փաստաբանի կողմից անվճար իրավաբանական օգնության և մասնագիտական անվճար աջակցության տրամադրմանը նպաստելը:

Թեև անվճար իրավաբանական օգնություն տրամադրում է գրեթե յուրաքանչյուր փաստաբան, այնուամենայնիվ Պալատն անհրաժեշտ է համարել խրախուսել այս տեսակ հանրօգուտ աշխատանքը, նախ՝ պահպանելու համար դրա շարունակականությունը, այնուհետև՝ բարձրացնելու այդ գործում ներգրավված փաստաբանների քանակը:

Ինչպես նախկինում, այնպես էլ՝ 2024 թվականին երիտասարդ փաստաբաններին տրամադրվել է անվճար աշխատասենյակից օգտվելու հնարավորություն: ՀՀ ՓՊ հանրային պաշտպանի գրասենյակի ղեկավարի կողմից վերջիններիս տրվել են Հանրային պաշտպանի գրասենյակի շահառուներին անվճար իրավաբանական օգնություն տրամադրելու հանձնարարություններ:

Այս եղանակով Պալատը նպաստել է անվճար իրավաբանական օգնության տրամադրման ծավալների ավելացմանը, ինչպես նաև երիտասարդ փաստաբանների կողմից մասնագիտական փորձառության ձեռքբերմանը:

ՀՀ փաստաբանների պալատի գործադրած ջանքերի շնորհիվ դեռևս 2022 թվականին ներդրվել է անվճար իրավաբանական օգնության տրամադրումը խրախուսելու համակարգ: Մասնավորապես՝ 2022 թվականին «Փաստաբանության մասին» օրենքում ընդգրկվել են դրույթներ, որոնք հնարավոր են դարձնում PRO BONO և ծրագրերի արդյունավետ իրագործումը:

Օրենսդրական փոփոխություններով ներդրվել է կամավոր անհատույց իրավաբանական օգնություն տրամադրող փաստաբանների և փաստաբանական գործունեություն իրականացնող կազմակերպությունների ցուցակ վարելու, կատարված աշխատանքի վերաբերյալ վերջիններիս կողմից հաշվետվություն ներկայացնելու, նրանց նկատմամբ **խրախուսման միջոցներ** կիրառելու և մի շարք այլ իրավակարգավորումներ:

Խրախուսման միջոցների կիրառման օրենսդրական հնարավորությունն այն գործուն միջոցն է, որի օգտագործմամբ Պալատը նախատեսում էր հասնել իր առջև դրված նպատակին՝ անվճար իրավաբանական օգնության և մասնագիտական աջակցության քանակի ավելացմանը:

2024 թվականին կատարվել է հրապարակում 2023 թվականի ընթացքում կամավոր անհատույց իրավաբանական օգնություն տրամադրած (ծրագրեր իրականացրած) փաստաբանների և փաստաբանական գործունեություն իրականացնող կազմակերպությունների ցուցակում ընդգրկվելու համար հաշվետվություն ներկայացնելու ժամկետների վերաբերյալ:

Ստացվել են անվճար իրավաբանական օգնություն տրամադրելու վերաբերյալ հաշվետվությունները, ուսումնասիրվել են հիմքերը, անվճար իրավաբանական օգնություն տրամադրած փաստաբանների նկատմամբ կիրառվեն են խրախուսանքի միջոցներ:

Սակայն, անվճար իրավաբանական օգնության տրամադրման շուրջ ձևավորված իրավիճակը կտրուկ փոխվեց, երբ 2024 թվականին, պետությունն այս ուղղությամբ սկսեց վարել նախկինից խիստ տարբերվող և աշխարհում նախադեպը չունեցող քաղաքականություն:

Մասնավորապես՝ շրջանառության մեջ դրվեց և ընդունվեց «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» թիվ ՀՕ-285-Ն ՀՀ օրենքը, որով նախատեսվում է **2025 թվականի հունվարի 1-ից հարկման ենթարկել անվճար իրավաբանական օգնության տրամադրումը:**

Պալատը հավատարիմ մնալով իր գաղափարներին, հաշվետու ողջ ժամանակահատվածում կատարելով բոլոր հնարավոր քայլերը ներպետական և միջազգային հարթակներում, պայքարեց նշված օրենքի ընդունումը կանխելու, իսկ դրա ընդունումից հետո՝ դրույթների Հայաստանի Հանրապետության սահմանադրությանը համապատասխանությունը վիճարկելու ուղղությամբ: Նախատեսվում է շարունակել այս ուղղությամբ մղվող պայքարը[18]:

[18] *Իրավականված քայլերի վերաբերյալ մանրամասն տեղեկատվությունն առկա է հաշվետվության առաջին գլխում*

IX. ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՄԻՋԵՎ ՈՉ ՖՈՐՄԱԼ ՇՓՈՒՄՆԵՐԻՆ ՆՊԱՍՏՈՂ ՄԱՐԶԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ, ԻՆՏԵԼԵԿՏՈՒԱԼ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՔԱՆԱԿԻ ԱՎԵԼԱՑՈՒՄ

Փաստաբանների պալատի համար կարևոր նշանակություն ունի փաստաբանների միջև ոչ ֆորմալ շփումը, քանի որ դա կարևոր նախադրյալ է փաստաբանների միասնականության ամրապնդման և միմյանց հանդեպ հարգանքի ձևավորման համար:

Հաշվետու ժամանակահատվածում կազմակերպվել են մի շարք միջոցառումներ, որոնք ամփոփված են սույն գլխում:

➢ «ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՎՈԼԵՅԲՈԼԻ ԳԱՎԱԹ 2024»

2024 թվականի հունվարի 20-ին և 28-ին տեղի է ունեցել ՀՀ փաստաբանների պալատի մարզամշակութային ակումբի կողմից կազմակերպված **«Փաստաբանների վոլեյբոլի գավաթ 2024»** մրցաշարը:

Մրցաշարին մասնակցել են փաստաբանների կողմից ձևավորված «Փաստաբանական ակադեմիա», «Արցախ», «Շուշի», «Հանրային պաշտպանի գրասենյակ» և «Լեգիտիմ» թիմերը: Եզրափակչում հանդես են եկել «Փաստաբանական ակադեմիա» և «Շուշի» թիմերը:

Մրցաշարի արդյունքներով **հաղթող է ճանաչվել «Շուշի» թիմը**[19]:

[19] *Տե՛ս հետևյալ հղումով՝ https://www.advocates.am/news/view/3766.html , https://www.advocates.am/news/view/3778.html*

➢ «ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՖՈՒՏԲՈԼԻ ԳԱՎԱԹ 2024»

2024 թվականի փետրվարի 3-ին մեկնարկել է **«Փաստաբանների ֆուտբոլի գավաթ 2024»** մրցաշարը: Մրցաշարի ընթացքում միմյանց դեմ մրցել են մի շարք թիմեր:

Փետրվարի 24-ին կայացել է ֆուտբոլային մրցաշարի եզրափակիչ փուլը: Եզրափակչում պատվավոր տեղերի համար պայքարում էին «Ակադեմիա», «Արցախ-Երևան», «Վի Ար Վիրտուոզ» և «Մերենգես» թիմերը: **Հաղթական գավաթը նվաճել է «Ակադեմիա» թիմը**՝ 7:4 հաշվով առաջ անցնելով «Արցախ-Երևան» թիմից[20]:

➢ «ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՇԱԽՄԱՏԻ ԳԱՎԱԹ 2024»

2024 թվականի մարտի 16-ին ՀՀ փաստաբանների պալատում անցկացվել է **«Փաստաբանների շախմատի գավաթ 2024»** մրցաշարը, որին մասնակցել են

[20] *Տե՛ս հետևյալ հղումով՝ https://www.advocates.am/news/view/3792.html, https://www.advocates.am/news/view/3810.html*

փաստաբանները և ՀՀ փաստաբանական ակադեմիայի ունկնդիրները: Մրցաշարն իրականացվել է յոթ խաղափուլով՝ շվեյցարական համակարգով:

Պատվավոր տեղերը զբաղեցրած մասնակիցները պարգևատրվել են պատվոգրերով և մեդալներով:

Պարգևները հանձնել է ՀՀ փաստաբանների պալատի նախագահ Սիմոն Բաբայանը[21]:

➢ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՐԸ

2024 թվականի հունիսի 1-ին Փաստաբանների պալատում նշվել է Երեխաների պաշտպանության միջազգային օրը: Միջոցառման ընթացքում ամփոփվել է նախապես հայտարարված «**ԻՄ ՀԱՅՐԵՆԻՔԸ» ստեղծագործական աշխատանքների մրցույթը**: Ճանաչվել են երեք անվանակարգերի հաղթողները:

[21] *Տե՛ս հետևյալ հղումով՝ https://www.advocates.am/news/view/3830.html*

Գեղեցիկ աշխատանքներ ներկայացնելու համար մյուս բոլոր մասնակիցները ևս պարգևատրվել են հավաստագրերով և նվերներով[22]:

X. ՓԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ԽԹԱՆՈՂ ԾՐԱԳՐԵՐԻ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆ

Փաստաբանների պալատը կարևորում է Հայաստանի Հանրապետությունում փաստաբանական գործունեության իրականացման գրասենյակային մշակույթի զարգացումը:

Այդ նպատակով ՀՀ փաստաբանների պալատի պաշտոնական կայքէջում մշտապես հրապարակվում են բոլոր փաստաբանական գրասենյակների տվյալները:

[22] *Տե՛ս հետևյալ հղումով՝* https://www.advocates.am/news/view/3922.html

Յուրաքանչյուր այցելու մուտք գործելով ՀՀ փաստաբանների պալատի պաշտոնական կայքէջի՝ www.advocates.am-ի «Գրասենյակներ» բաժին կարող է ծանոթանալ Հայաստանի Հանրապետությունում գործունեություն իրականացնող գրասենյակների ցանկին: Ցանկը կազմված է այբբենական կարգով:

Կայքում գրասենյակների վերաբերյալ հնարավոր է գտնել անհրաժեշտ ամբողջ տեղեկատվությունը՝ փաստաբանական գրասենյակի անվանումը, կազմակերպության ապրանքային նշանը, հասցեն, հեռախոսահամարները, էլեկտրոնային փոստի հասցեն, կայքի հասցեն, մասնագիտացումը, յուրաքանչյուր փաստաբան մասնակցի մասին տեղեկություն, ինչպես նաև մի քանի այլ տվյալներ:

Հաշվետու ժամանակահատվածում վերը նշված բաժնում ներառվել են նորաբաց փաստաբանական գրասենյակների տվյալները:

Յուրաքանչյուր քաղաքացի կամ կազմակերպություն, որը փնտրում է փաստաբան, հեշտությամբ կարող է ծանոթանալ ոչ միայն փաստաբանների ցանկին, այլև գործող փաստաբանական գրասենյակների ցանկին և հեշտությամբ գտնել իր համար նախընտրելի փաստաբանական գրասենյակը:

Փաստաբանական գրասենյակների տվյալների հրապարակումը լինելու է շարունակական, քանի որ Փաստաբանների պալատի դիտարկմամբ՝ փաստաբանական գրասենյակների վերաբերյալ տեղեկատվության համակարգված ներկայացումը նպաստում է փաստաբանական գրասենյակների դիմելիության բարձրացմանը, այդպիսով՝ նաև դրանց զարգացմանը:

Հաշվետու ժամանակահատվածում ՀՀ փաստաբանների պալատի ներկայացուցիչներն այցելել են փաստաբանական գրասենյակներ՝ տեղում ծանոթանալու համար գրասենյակի աշխատանքն, ինչպես նաև գրասենյակի աշխատակիցների հետ քննարկելու համար փաստաբանությանն առնչվող և գործնականում ծագող հիմնախնդիրները:

2024 թվականի սեպտեմբերի 26-ին ՀՀ փաստաբանների պալատի նախագահ Սիմոն Բաբայանը, ՀՀ փաստաբանական ակադեմիայի ռեկտոր Արա Զոհրաբյանը, Փաստաբանների պալատի աշխատակազմի ներկայացուցիչների հետ միասին այցելել են «ELL» փաստաբանական գրասենյակ: Այցի ընթացքում վերջիններս ծանոթացել են ընկերության աշխատանքային պայմաններին, գործառույթներին, ապա գործընկերների հետ քննարկել են փաստաբանական ոլորտին առնչվող հարցեր:

Փաստաբանական գործունեության իրականացման գրասենյակային մշակույթը զարգացնելու նպատակով, այցի վերաբերյալ պատրաստվել է տեսանյութ, որը հրապարակվել է տեղեկատվական հարթակներում [23]:

[23] *Տե՛ս հետևյալ հղումով՝ https://www.youtube.com/watch?v=AfOrvRMfemY*

2024 թվականի հոկտեմբերի 26-ին ՀՀ փաստաբանների պալատի նախագահը և պալատի ներկայացուցիչներն այցելել են «Գրիտարես» փաստաբանական գրասենյակ:

Այցի ընթացքում քննարկվել են գրասենյակի գործառույթները, ուղղությունները, զարգացման միտումները, ոլորտում առկա խնդիրները: Այս պարագայում ևս փաստաբանական գործունեության իրականացման գրասենյակային մշակույթը զարգացնելու նպատակով այցի վերաբերյալ պատրաստվել է տեսանյութ, որը հրապարակվել է տեղեկատվական հարթակներում [24]:

2024 թվականի հոկտեմբերի 11-ին ՀՀ փաստաբանների պալատի նախագահի առաջին տեղակալ Հարութ Ակլունցը մասնակցել է WISE փաստաբանական գրասենյակի 10-ամյակի միջոցառմանը:

Փաստաբանական գրասենյակներ կատարվող այցերը լինելու են շարունակական: Հետագայում նախատեսվում է նաև իրականացնել փաստաբանական գրասենյակների ցուցահանդես:

Փաստաբանական գրասենյակներ այցելություններ, ինչպես նաև գրասենյակների ցուցահանդես իրականացնելով, տարբեր տեղեկատվական հարթակներում դրանք լուսաբանելով, Պալատը փորձելու է նպաստել փաստաբանական գործունեության իրականացման գրասենյակային մշակույթի զարգացմանը:

XI. ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔՈՒՄ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԵՎ ԳՈՐԾԻՔԱԿԱԶՄԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆԸ ՆՊԱՍՏՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատը կարևորում է ժամանակակից տեխնոլոգիաների և գործիքակազմերի կիրառումը փաստաբանական գործունեության կազմակերպման գործընթացում:

Նման տեխնոլոգիաների և գործիքակազմերի ներդրման և զարգացման ուղղությամբ Պալատը շարունակաբար իրականացնում է թիրախային աշխատանքներ:

Մասնավորապես՝ հաշվետու ժամանակահատվածում Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատը շարունակել է ներպետական և միջազգային գործընկերների հետ քննարկել էլեկտրոնային արդարադատության համակարգի մշակման և ներդրման հետ կապված առանցքային հարցերը:

[24] *Տե՛ս հետևյալ հղումով՝ https://www.youtube.com/watch?v=h-YxyeOS5t4*

Դրան զուգահեռ՝ շարունակվել են նաև Հանրային պաշտպանի գրասենյակի աշխատանքի կազմակերպման համար նախատեսված էլեկտրոնային հանրային պաշտպանի գրասենյակի տեղեկատվական համակարգի *(այսուհետ՝ նաև Էլեկտրոնային համակարգ)* թարմացման ուղղությամբ իրականացվող աշխատանքները:

Հայեցակարգով նախատեսվում է արդիականացնել Էլեկտրոնային համակարգը՝ դրանում հավելյալ գործիքակազմեր ներդնելու եղանակով, այդ թվում՝ վարույթների էլեկտրոնայնացում, գործերի կշռման գործիքի ներդրում, հաշվետվողականության և մշտադիտարկման կարողությունների զարգացում:

Բացի այդ, հանրային պաշտպանները շարունակել են օգտվել իրենց գերծանրաբեռնվածությունը թոթափելու նպատակով ներդրված ծրագրից՝ էլեկտրոնային հարթակից, որով հանրային պաշտպանները գաղտնիության պայմանների պահպանմամբ տեսակապի միջոցով կարողանում են տեսակցել ՀՀ ԱՆ «Արմավիր» քրեակատարողական հիմնարկում գտնվող իրենց վստահորդի հետ: Այս ծրագրի շնորհիվ հանրային պաշտպանների կողմից քրեակատարողական հիմնարկներ կատարվող այցերի անհրաժեշտությունը նախորդ տարիների համեմատ նվազել է:

2024 թվականին ուժի մեջ է մտել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում էլեկտրոնային եղանակով իրականացվող դատավարական և այլ գործողությունների առանձնահատկությունները նախատեսող գլուխն իր համապատասխան կարգավորումներով:

Հաշվի առնելով դատավարական համակարգում տեղի ունեցող էական փոփոխությունները և դրանց կիրառման համար փաստաբանների կարողությունները զարգացնելու, էլեկտրոնային գործիքակազմերի գործնականում ճիշտ կիրառմանը նպաստելու անհրաժեշտությունը, 2024 թվականի հունվարի 25-ից մեկնարկել են նշված թեմայով մեծաքանակ վերապատրաստման դասընթացները:

Վերապատրաստման դասընթացները վարել են ծրագրի հեղինակ Masys Information Systems կազմակերպության ներկայացուցիչներիը, ինչպես նաև Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի դատավոր Երեմ Եսոյանը:

Դասընթացները տեղի են ունեցել զուգահեռաբար հեռավար ձևաչափով, որպեսզի դասընթացներին մասնակցելու հնարավորություն ունենան մարզաբնակ փաստաբանները:

Քաղաքացիական դատավարության էլեկտրոնային համակարգի գործարկմամբ պայմանավորված դատավարական փաստաթղթերը անհրաժեշտ էր ներկայացնել էլեկտրոնային ստորագրման եղանակով, ինչի համար անհրաժեշտ էր նույնականացման (ID) քարտ: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ որոշ գործընկերներ չունեին նույնականացման քարտ և սուղ ժամկետների պատճառով

կարող էին խնդրի առաջ կանգնել համակարգից օգտվելիս, Պալատը պետական մարմինների հետ պայմանավորվածություն ձեռք բերեց՝ նույնականացման քարտ ստանալու համար փաստաբանների անձնագրային բաժանմունքում արտահերթ դիմումներ ներկայացնելու հնարավորություն ընձեռելու վերաբերյալ:

Համակարգի գործարկումից հետո, վերհանվել են նշված համակարգի հետ կապված խնդիրները, հավաքագրվել և ուղարկվել են Արդարադատության նախարարություն և Masys Information Systems կազմակերպություն:

Պալատը նաև օժանդակել է Էլեկտրոնային քաղաքացիական դատավարության համակարգում փաստաբանների գրանցմանը:

2024 թվականի հուլիսի 27-ին և 28-ին, դեկտեմբերի 7-ին և 8-ին Փաստաբանների պալատը՝ ՄԱԿ զարգացման ծրագրերի հայաստանյան գրասենյակի (UNDP) հետ համագործակցությամբ՝ Արցախից տեղահանված և Հայաստանում հավատարմագրված փաստաբանների, Շիրակի մարզի, այնուհետև Տավուշի մարզի փաստաբանների համար կազմակերպել է երկօրյա աշխատաժողովներ:

Աշխատաժողովների ընթացքում քննարկվել են մի շարք թեմաներ, այդ թվում՝ փաստաբանական գործունեությանն առնչվող էլեկտրոնային ռեսուրսները:

XII. ՈՒՍՈՒՑՈՒՄ ԵՎ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

Ուսուցման և փաստաբանների վերապատրաստման բաղադրիչի շրջանակներում կարող ենք արձանագրել, որ թե՛ Փաստաբանական ակադեմիայի, թե՛ ՀՀ փաստաբանների պալատի գործուն ջանքերի շնորհիվ փաստաբանական համայնքն առաջատար դիրքերում է և իր փորձը կիրառվում է շատ երկրներում, այդ թվում՝ զարգացած երկրներում:

Այդուհանդերձ, Փաստաբանների պալատը գտնում է, որ ուսումնական գործընթացը պետք է զարգանա համաժամանակյա ռեժիմով և պարբերաբար կատարելագործվի:

Միաժամանակ, ինչպես փորձն է ցույց տալիս առավել արդյունավետ են հատուկ մասնագիտացված կասկադային (դասախոսությունների խումբ) դասախոսությունները:

➢ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ

Փաստաբանների պալատում, ինչպես նախկինում, այնպես էլ հաշվետու ողջ ժամանակահատվածում ինտենսիվորեն կազմակերպվել և իրականացվել են վերապատրաստման դասընթացներ:

Փաստաբանների պալատում գործում է փաստաբանների վերապատրաստման երեք հարթակ՝ վերապատրաստման դասընթացներ տեղում՝ Փաստաբանների պալատում կամ Փաստաբանական դպրոցում, հեռավար և առցանց (online) վերապատրաստում:

Յուրաքանչյուր ամսվա վերջում Փաստաբանների պալատի կայքէջում հրապարակվում և փաստաբաններին էլեկտրոնային փոստի հասցեով ուղարկվում է հաջորդ ամսվա համար փաստաբանների վերապատրաստման դասընթացների ժամանակացույցը:

2024 թվականի ընթացքում, ընդհանուր առմամբ, տեղի է ունեցել **վերապատրաստման 245 անվճար դասընթաց՝** ներառյալ հեռավար և առցանց վերապատրաստման դասընթացները, ինչպես նաև ակումբի նիստերը և Փաստաբանների պալատի խորհրդի կողմից հավատարմագրված

հաստատությունների կողմից անցկացվող դասընթացները: Դասընթացներին մասնակցել են **2235** փաստաբաններ:

ՀՀ փաստաբանների պալատը ՀՀ փաստաբանական ակադեմիայի հետ համատեղ կազմակերպել է 20 վերապատրաստման դասընթաց՝ առկա և հեռավար տարբերակով:

➢ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՈՒՄ՝ ՀԱՇՎԻ ԱՌՆԵԼՈՎ ՆԱԵՎ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱՀԱՆՋՄՈՒՆՔՆԵՐԸ

Յուրաքանչյուր կիսամյակի Փաստաբանների պալատի նախագահի որոշումներով հաստատվում են վերապատրաստման դասընթացների թեմաները: Ինչպես նախկինում, այնպես էլ Հաշվետու ժամանակահատվածում ՀՀ ՓՊ նախագահի որոշումներով հաստատվել են թվով **200 վերապատրաստման դասընթացների թեմաներ**: Այդ թեմաներն առանձնացված են ըստ իրավունքի տարբեր ճյուղերի՝ քրեական, քաղաքացիական, վարչական և միջազգային իրավունք, ինչպես նաև գիտագործնական և այլ ուղղվածությունների (օրինակ՝ ՀՀ վճռաբեկ դատարանի նախադեպային որոշումներ, ներդրումային ոլորտ, տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառումը փաստաբանական գործունեության մեջ, զինծառայողների և, նրանց ընտանիքի անդամների իրավունքներ, էլեկտրոնային կառավարման գործիքները, անչափահասների իրավունքների պաշտպանության քրեաիրավական ասպեկտները, անհաղթահարելի ուժը քաղաքացիաիրավական հարաբերություններում և այլն):

Հարկ է նկատել, որ փաստաբանների վերապատրաստման համար հաստատված թեմաների գերակշիռ մասն ընտրվում են հենց փաստաբանների կողմից ներկայացված առաջարկներից:

➢ ԴԱՍԸՆԹԱՑԱՎԱՐՆԵՐԻ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԻ ԵՎ ԱՅԼ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՈՒՄ

Փաստաբանների պալատում վերապատրաստման դասընթացների դասընթացավարներն ընտրվում են խիստ չափանիշների հիման վրա, որպեսզի մասնագիտական վերապատրաստումը լինի որակյալ:

Այդ չափանիշները սահմանվել են Փաստաբանների պալատի նախագահի 2020 թվականի դեկտեմբերի 23-ի թիվ 417-Լ որոշման թիվ 1 հավելվածով, համաձայն

որի՝ փաստաբանը կամ այլ մասնագետը կարող է ընտրվել դասընթացավար, եթե՝

1. *ունի լսարանի հետ աշխատելու հմտություններ,*
2. *ներկայացրել է Պալատի նախագահի հաստատած թեմաներից որևէ մեկի վերաբերյալ դասավանդման առարկայական ծրագիր, և*
3. *ունի՝*

- *առնվազն 5 (հինգ) տարվա փաստաբանական գործունեության ստաժ, կամ*
- *գիտական աստիճան, կամ*
- *դատավորի կարգավիճակ, կամ*
- *դասախոսի կարգավիճակ, կամ*
- *այլ մասնագիտությունների դեպքում՝ 5 (հինգ) տարվա համապատասխան մասնագիտական ստաժ:*

Փաստաբանի վարքագծի կանոնները (դեոնթոլոգիա) առարկայի վերապատրաստման դասընթացներ կարող է վարել Պալատի խորհրդի անդամը, որակավորման հանձնաժողովի փաստաբան անդամը, Պալատի աշխատակազմի փաստաբան անդամը, ինչպես նաև Դասընթացավարների ցուցակում ընդգրկված այլ փաստաբանը:

Նույն կարգի համաձայն՝ դասավանդողների ընտրությունը կատարում է Պալատի աշխատակազմի ղեկավարը *(Փաստաբանների պալատի նախագահի 23.12.2020թ. թիվ 417-Լ որոշմամբ ձևավորվում է նաև դասընթացավարների ընտրության փորձագետների խումբ):*

➢ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՈՒՄ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՎԱԾ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ

Փաստաբանների պալատից և Փաստաբանական դպրոցից բացի՝ փաստաբաններին վերապատրաստելու իրավունք է նախատեսվել նաև Փաստաբանների պալատի խորհրդի կողմից հավատարմագրված այլ կազմակերպությունների համար:

Փաստաբանների պալատի խորհրդի 15.08.2024թ. թիվ 1415-Լ որոշմամբ հաստատվել է «Փաստաբանների վերապատրաստում իրականացնող հաստատությունների հավատարմագրման» կարգը, որով նախատեսվել են վերապատրաստման դասընթացներ կազմակերպելու համար կազմակերպություններին հավատարմագիր տալու հստակ չափանիշներ: Նշված կարգի համաձայն 2024 թվականին փաստաբանների վերապատրաստումը

կազմակերպելու համար հավատարմագրվել են հետևյալ կազմակերպությունները.

- ***«Իրավաբանների հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպություն.***
- ***Միջազգային իրավական համագործակցության գերմանական հիմնադրամ (IRZ).***
- ***«Հայաստանի ամերիկյան համալսարան» հիմնադրամ.***
- ***«Մտավոր սեփականության իրավունքի կենտրոն» հիմնադրամ***
- ***Երևանում Եվրոպայի խորհրդի գրասենյակ.***
- ***Միացյալ ազգերի կազմակերպության հայաստանյան գրասենյակ.***
- ***Միացյալ ազգերի կազմակերպության մանկական հիմնադրամ (ՅՈՒՆԻՍԵՖ/UNICEF).***
- ***«Արդարադատության ակադեմիա» պետական ոչ առևտրային կազմակերպություն.***

2024 թվականին Փաստաբանների պալատի կողմից հավատարմագրված կազմակերպությունների կողմից փաստաբանների համար կազմակերպվել է շուրջ 12 վերապատրաստման դասընթաց:

➢ ՀԵՌԱՎԱՐ (ԴԻՍՏԱՆՑԻՈՆ) ԵՎ ԱՌՑԱՆՑ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՁԵՎՈՎ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ ԱՆՑՆԵԼՈՒ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

2024 թվականին վերապատրաստման դասընթացների մեծ մասն անցկացվել է առկա և հեռավար տարբերակով, որի արդյունքում կազմակերպվել են շուրջ 180 հեռավար դասընթացներ: Հարկ է նշել, որ 2024 թվականին կազմակերպվել են 20-ից ավել հեռավար դասընթացներ միայն ՀՀ մարզի փաստաբանների համար: Առցանց հարթակում տեղադրվել է 1 նոր վերապատրաստման տեսադաս:

➢ ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԵՎ ՄԱԿ-Ի ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

ՀՀ փաստաբանների պալատի և ՄԱԿ-ի զարգացման ծրագրի համագործակցության շրջանակներում Արցախի փաստաբանների, ինչպես նաև ՀՀ մարզերի փաստաբանների համար կազմակերպվել են 15-ից ավել 2-օրյա վերապատրաստման դասընթացներ: Դասընթացների մասնակիցներն ապահովվել են գիշերակացով և սնունդով՝ հնարավորություն տալով ամբողջությամբ ներգրավված լինել դասընթացներին: Դասընթացները տեղի են ունեցել Շիրակի, Վայոց Ձորի,

Լոռու և Տավուշի մարզերում: ՀՀ բոլոր մարզերի փաստաբաններին հնարավորություն է ընձեռվել մասնակցելու վերը նշված վերապատրաստման դասընթացներին: Թեմաները վերաբերել են քրեական, քաղաքացիաիրավական, ինչպես նաև փաստաբանական գործունեությանն առնչվող էլեկտրոնային ռեսուրսներին: Դասընթացները վարել են տվյալ ոլորտի լավագույն մասնագետները: Վերապատրաստման դասընթացներին ընդհանուր առմամբ մասնակցել է 165 փաստաբան:

Նման ձևաչափով վերապատրաստումները նաև հարթակ են ստեղծում փաստաբանների համար դասընթացներից դուրս ոչ ֆորմալ շփումների, մասնագիտական քննարկումներ ունենալու և մտքեր փոխանակելու:

XIII. ՏԱՐԵՑ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԾՐԱԳՐԵՐԻ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ

Փաստաբանների պալատը մշտապես իր աջակցությունն է ցուցաբերել դրա կարիքն ունեցող փաստաբաններին:

Ինչպես ցույց է տալիս փորձը աջակցության կարիք ունեն հատկապես տարեց փաստաբանները: Նրանց հանդեպ օժանդակությունը դրսևորվել է անդամավճարի և պարտադիր վերապատրաստման դասընթացներին մասնակցելուց ազատելու արտոնություններ տրամադրելու ձևով:

«Փաստաբանության մասին» օրենքի 45.12-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ *փաստաբանը պարտավոր է անցնել փաստաբանների պալատի խորհրդի սահմանած կարգով և ժամաքանակով վերապատրաստման դասընթացներ, որոնք չեն կարող երկու տարվա ընթացքում քառասունութ ժամից պակաս լինել:*

ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի **2023 թվականի հունվարի 13-ին** թիվ 2/5-Լ որոշմամբ հաստատված՝ *«Փաստաբանների վերապատրաստման, դրա համար անհրաժեշտ վճարների չափը սահմանելու և վճարելու»* կարգի համաձայն՝ 63 տարին լրացած և փաստաբանական գործունեությամբ չզբաղվող փաստաբանները **ազատվում են վերապատրաստմանը մասնակցելու պարտավորությունից:**

63 տարին լրացած և փաստաբանական գործունեությամբ չզբաղվող **275 փաստաբան 2024 թվականին** ազատվել է վերապատրաստմանը մասնակցելու պարտավորությունից:

Բացի այդ, **«Փաստաբանության մասին» օրենքի** 19-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի համաձայն՝ փաստաբանը պարտավոր է մուծել անդամավճարներ:

ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի կողմից **2023 թվականի հունվարի 13-ին** ընդունել է «Փաստաբանի անդամավճարի, հավակնորդի, փաստաբանի օգնականի մուտքի և այլ վճարների չափերը, ինչպես նաև դրանք վճարելու կարգը հաստատելու մասին» թիվ 2/6-Լ որոշումը:

Համաձայն այդ որոշման Հավելված 1-ի 20-րդ կետի՝

«Փաստաբանը անդամավճար վճարելու պարտավորությունից ամբողջությամբ ազատվում է Պալատի կանոնադրությանը և սույն կարգին համապատասխան՝ հետևյալ դեպքերում.

(…) 6) 70 (յոթանասուն) տարին լրացած լինելու դեպքում»:

2024 թվականին անդամավճար վճարելու պարտավորությունից ազատվել է **70 տարին լրացած 140 փաստաբան:**

XIV. ՓԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԵՎ ԻՐԱՎԱԿԻՐԱՌ ՈԼՈՐՏՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ՓՈԽԱԴԱՐՁ ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐԹԱԿՆԵՐԻ ԸՆԴԼԱՅՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆ

Փաստաբանական համայնքի և իրավակիրառ ոլորտների ներկայացուցիչների փոխադարձ քննարկման հարթակների առկայության անհրաժեշտությունը պայմանավորված է տարբեր ոլորտներում առկա խնդիրների լուծման արդյունավետ ուղիներ ձևավորելու, կարծիքների փոխանակում իրականացնելու, իրավունքի զարգացմանը նպաստելու հանգամանքներով:

Դատական, գործադիր և օրենսդիր իշխանությունների հետ նմանատիպ կայուն հարթակների արդյունավետության փորձն ապացուցվել է բազմաթիվ անգամներ:

ՀՀ փաստաբանների պալատը իրավասու պետական մարմինների առաջարկով դիտարկումներ և առաջարկներ է ներկայացրել հետևյալ նորմատիվ իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ՝

1. «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի,

2. ««Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի,

3. «Միջազգային քրեական դատարանի հետ Հայաստանի Հանրապետության համագործակցության մասին» ՀՀ օրենքի նախագծի,

4. ««Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում» փոփոխություն և լրացում կատարելու մասին» և ««Շարժական գույքի նկատմամբ ապահովված իրավունքների գրանցման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծի,

5. Արդարադատության նախարարի 2023 թվականի հուլիսի 11-ի «Հրապարակային սակարկությունների համար նախատեսված էլեկտրոնային կայքի միջոցով սնանկության վարույթում պարտապանին գույքի վաճառքի իրականացման կարգը սահմանելու և Արդարադատության նախարարի 2020 թվականի նոյեմբերի 27-ի N 419-Ն հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 385-Ն հրամանում փոփոխություններ կատարելու մասին» հրամանի նախագծի,

6. Փաստաբանների պաշտպանության հարցերով փորձագետների խմբի (CJ-AV) կողմից մշակված «Փաստաբանների պաշտպանության մասին» կոնվենցիայի և վերջինիս բացատրական զեկույցի նախագծի,

7. «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին օրենքի նախագծի (2-րդ կետում նշված օրենքի նախագծի լրամշակված տարբերակ)

8. Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ և Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին օրենքների նախագծի,

9. «Փաստաբանության մասին» օրենքում լրացում կատարելու մասին օրենքի նախագծի,

10. ««Հաշտարարության մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին», ««Պետական տուրքի մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքների նախագծերի,

11. ««Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում լրացումներ կատարելու մասին» սահմանադրական օրենքի», «Քաղաքացիական դատավարության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» օրենքի, «Վարչական դատավարության օրենսգրքում լրացումներ կատարելու

մասին» օրենքի և «Քրեական դատավարության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծերի վերաբերյալ:

Փաստաբանների պալատ են այցելել Հարկադիր կատարումն ապահովող ծառայության ղեկավար կազմի ներկայացուցիչները՝ Հարկադիր կատարումն ապահովող ծառայության էլեկտրոնային համակարգի հնարավորությունները փաստաբաններին ներկայացնելու համար: Փաստաբաններին մանրամասն ներկայացվել է նաև Հարկադիր կատարումն ապահովող ծառայության պաշտոնական կայքի (www.cesa.am) թվային հարթակների հնարավորությունները, ինչպես նաև դրանց միջոցով վճարումներ կատարելու առավելությունները, QR կոդով հարկադիր կատարողի կողմից կայացված որոշումների բնօրինակներին հասանելիության ապահովումը և այլ կարևոր դրույթներ[25]:

Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի ուսումնասիրության արդյունքում, ՀՀ փաստաբանների պալատը գտել է, որ փաստաբանական ծառայությունների մասով Նախագծի կարգավորումները խնդրահարույց են և անընդունելի:

2024 թվականի փետրվարի 2-ին ՀՀ փաստաբանների պալատն իր պաշտոնական դիրքորոշումն է հայտնել՝ հիմնավորումներ ուղարկելով՝ ՀՀ վարչապետի աշխատակազմ, ՀՀ ֆինանսների նախարարություն, ՀՀ արդարադատության նախարարություն, ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանին[26]:

Ազգայն ժողովի Պետական-իրավական հարցերի մշտական հանձնաժողովում ՀՀ փաստաբանների պալատի ներկայացուցիչների հետ տեղի է ունեցել հանդիպում-քննարկում «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծ խնդրահարույց դրույթների թեմայով[27]:

2024 թվականի հուլիսի 17-ին Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի նախագահ Սիմոն Բաբայանը և նախագահի տեղակալ Հարութ Ակլունցը ներկա են գտնվել «Մարդու իրավունքների պաշտպանության խթանում և ազգային հաստատությունների հզորացում» ծրագրի մեկնարկը ազդարարող հանդիսավոր արարողությանը: Միջոցառմանը ներկա են եղել Եվրոպական միության, ՄԱԿ-ի գործակալությունների և Հայաստանի Հանրապետության պետական թիրախային գերատեսչությունների բարձրաստիճան պաշտոնյաներ, դիվանագիտական կառույցների ներկայացուցիչներ և այլ

[25] *Տե՛ս հետևյալ հղումով՝ https://www.advocates.am/news/view/3772.html*
[26] *Տե՛ս հետևյալ հղումով՝ https://www.advocates.am/news/view/3790.html*
[27] *Տե՛ս հետևյալ հղումով՝ https://www.advocates.am/news/view/3825.html*

գործընկերներ: Փաստաբանների պալատի նախագահ Սիմոն Բաբայանը հանդես է եկել ելույթով, որում առանձնակի կարևորել է ծրագրի նպատակները՝ ընդգծելով մասնավորապես Հայաստանում մարդու իրավունքների պաշտպանության և իրավունքի գերակայության ամրապնդմանն ուղղված ջանքերի շարունակականության ապահովման անհրաժեշտությունը, ինչպես նաև քաղաքացիներին որակյալ անվճար իրավաբանական օգնության տրամադրման մեխանիզմների ու կարողությունների զարգացումը[28]:

2024թ. սեպտեմբերի 4-ին, ՀՀ փաստաբանների պալատի նախագահ Սիմոն Բաբայանը հանդիպել է Մարդու իրավունքների պաշտպան Անահիտ Մանասյանին: Հանդիպմանը ներկա են եղել Պալատի նախագահի առաջին տեղակալ Հարութ Ակլունցը, ներկայացուցիչներ Փաստաբանների պալատից և Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակից: Հանդիպման ընթացքում կարևորվել է երկու կառույցների միջև կնքված համագործակցության հուշագրի նշանակությունը և երկարամյա սերտ համագործակցության պատմությունը: Քննարկվել են Արցախից բռնի տեղահանված փաստաբանների և քաղաքացիների իրավական խնդիրների լուծմանն աջակցելու,

[28] Տե՛ս հետևյալ հղումով՝ https://www.advocates.am/news/view/3982.html

խոշտանգումների և այլ վատ վերաբերմունքի դրսևորումները կանխարգելելուն ուղղված գործողությունների համակարգման, փաստաբանների մասնագիտական գործունեությանը խոչընդոտումների դեմ գործակցելու, ինչպես նաև իրավաբանական օգնության նկատմամբ կիրառվող հարկային բեռի ավելացմանն առնչվող և ոլորտային մի շարք այլ կարևոր հարցեր[29]:

XV. ՀԱՆՐԱՅԻՆ ԻՐԱՎԱԳԻՏԱԿՑՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ԵՎ ԻՐԱԶԵԿՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ

Փաստաբանների պալատի օրենքով ամրագրված խնդիրներից է՝ հանրային իրավագիտակցության և իրավական մշակույթի բարձրացմանը նպաստելը: Նշված նպատակին հասնելու նկատառումներից ելնելով ՀՀ փաստաբանների պալատը 2022-2025 թվականների Ռազմավարական ծրագրում ներառել է այդ ուղղությամբ միջոցառումների իրականացման գործառույթը: Այս նպատակի իրագործումն իր հերթին խթանում է հասարակության մեջ փաստաբանի դերի և հեղինակության բարձրացումը, փաստաբանի գործունեության իրավապաշտպան բնույթի ընկալման ձևավորումը:

Հաշվետու ժամանակահատվածում հանրային իրավագիտակցության բարձրացման ուղղությամբ Փաստաբանների պալատը իրականացրել է մի շարք միջոցառումներ, որոնք ամփոփ ներկայացված են սույն գլխում:

➢ ԻՐԱՎԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆԸ ԲԵՐՄԱՆ ԵՆԹԱՐԿՎԱԾՆԵՐԻՆ

Հայաստանի Հանրապետության մարզերում և Երևան քաղաքում հավաքներ

[29] Տե՛ս հետևյալ հղումով՝ *https://www.advocates.am/news/view/4020.html*

իրականացնող քաղաքացիներին բերման ենթարկելու վերաբերյալ տվյալներ ստանալուց անմիջապես հետո՝ 2024 թվականի մայիսի 10-ին, վերջիններիս առաջին իրավաբանական օգնություն ցուցաբերելու նպատակով, ՀՀ փաստաբանների պալատը ձևավորել է արագ արձագանքման խումբ: Հավատարիմ իրենց իրավապաշտպան գործունեությանը, արագ արձագանքման խմբում ընդգրկված փաստաբանները Ոստիկանության տարբեր բաժիններում առաջնային իրավաբանական օգնություն են ցուցաբերել բերման ենթարկված քաղաքացիներին:

➢ «ՓԱՍՏԱԲԱՆԻ ԽՈՐՀՐԴՈՎ» ՀԱՂՈՐԴԱՇԱՐԸ

2022 թվականին մեկնարկել է **«Փաստաբանի խորհրդով» հաղորդաշարը**, որի նկարահանումներն իրականացվել են Փաստաբանների պալատի գրադարանում: **2023 թ. հոկտեմբերի 15-ից սկսած հաղորդաշարը** նկարահանվել և հեռարձակվել է **«Հ2»** հեռուստաալիքի եթերում:

Հանրության իրավագիտակցության բարձրացմանը և իրավական մշակույթի զարգացմանը նպաստելու նպատակով ստեղծված հաղորդաշարը տարածում է ստացել նաև «Հ2» Հ/Ը-ի Յութուբյան ալիքում, ստեղծվել են **«Փաստաբանի խորհրդով հաղորդաշար»** Ֆեյսբուք և Տիկ-Տոկ սոցիալական ցանցերի էջեր: Սոցիալական հարթակների միջոցով հաղորդաշարին լայն տարածում ապահովելու և

հանրությանն ավելի հասանելի դարձնելու նպատակով թողարկումները նաև գովազդվել են:

2024 թվականի ընթացքում նկարահանվել և հեռարձակվել է շուրջ 40 հաղորդում:

➢ ԱՆՎՃԱՐ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ



Կանանց միջազգային օրվա կապակցությամբ ՀՀ փաստաբանների պալատը նախաձեռնել է «Անվճար իրավաբանական խորհրդատվություն կանանց համար» միջոցառումը, որի շրջանակներում միջոցառմանը միացած փաստաբանները, փաստաբանական գրասենյակները և Փաստաբանական ակադեմիայի ունկնդիրները անվճար իրավաբանական խորհրդատվություն են տրամադրել կանանց: Միջոցառումն անց է կացվել **2024 թվականի մարտի 6-ին և 7-ին:**

Նշված միջոցառման նպատակներից էին՝ խթանել կանանց իրավունքների պաշտպանությունը Հայաստանում, ինչպես նաև բարձրացնել հանրային իրավագիտակցությունը և փաստաբանին դիմելու իրավական մշակույթը:

➢ ՃԱՆԱՉՈՂԱԿԱՆ ԱՅՑԵՐ

Հաշվետու ժամանակահատվածում ճանաչողական այցեր են իրականացվել ՀՀ փաստաբանների պալատ:

Մասնավորապես՝

2024 թվականի մարտի 19-ին ՀՀ փաստաբանների պալատը հյուրընկալել **է Հյուսիսային համալսարանի իրավաբանական կլինիկայի ուսանողներին**:

Ուսանողներին ողջունել է ՀՀ փաստաբանների պալատի աշխատակազմի ղեկավար Լուսինե Սարգսյանը:

Լուսինե Սարգսյանն ուսանողներին է ներկայացրել ՀՀ փաստաբանների պալատի և Հանրային պաշտպանի գրասենյակի գործառույթներն ու առանձնահատկությունները, ինչպես նաև փաստաբան դառնալու ընթացակարգը և անհրաժեշտ պայմանները:

Այնուհետև ուսանողները շրջել են Փաստաբանների պալատի վարչական շենքում, եղել են Փաստաբանական ակադեմիայում և Հանրային պաշտպանի գրասենյակում՝ անմիջականորեն ծանոթանալով աշխատանքային գործընթացին[30]:

2024 թվականի հունիսի 21-ին Հայաստանի Հանրապետության Փաստաբանների պալատում հյուրընկալվել են **Ոստիկանության ակադեմիայի ուսանողները**: Հյուրընկալված ուսանողներին հնարավորություն է ընձեռնվել այցելել Փաստաբանական ակադեմիա և Հանրային պաշտպանի գրասենյակ: Նրանց ներկայացվել է Փաստաբանական ակադեմիա ընդունվելու կարգը, ուսումնական գործընթացը, դասավանդման մեթոդները և այլ կարևոր դրույթներ:

Հանրային պաշտպանի գրասենյակում ուսանողներն անմիջականորեն ծանոթացել են ընթացող աշխատանքներին, ինչպես նաև ստացել հանրային

[30] Տե՛ս հետևյալ հղումով՝ https://www.advocates.am/news/view/3833.html

պաշտպանների գործառույթների վերաբերյալ իրենց հուզող մի շարք հարցերի պատասխաններ[31]:

2024 թվականի հոկտեմբերի 10-ին ՀՀ փաստաբանների պալատը հյուրընկալել է **Սևանի թիվ 6 միջնակարգ դպրոցի աշակերտներին և ուսուցիչներին:** Աշակերտների համար բովանդակային օր ապահովելու համար նրանց հետ հանդիպել և զրուցել են ՀՀ փաստաբանների պալատի նախագահ Սիմոն Բաբայանը, Փաստաբանական ակադեմիայի ռեկտոր Արա Զոհրաբյանը, պրոռեկտոր Մանե Կարապետյանը, Փաստաբանների պալատի աշխատակազմի ղեկավար Լուսինե Սարգսյանը և Հանրային պաշտպանի գրասենյակի ղեկավար Գևորգ Մկրտչյանը:

Փաստաբանների պալատի և Փաստաբանական ակադեմիայի ներկայացուցիչները, բազմաթիվ խորհուրդների հետ մեկտեղ, աշակերտներին հորդորել են լավ սովորել, քանի որ յուրաքանչյուր հաջողության հիմքում լավ կրթությունն է: Հայրենիքին արժանի մարդ, պետությանն արժանի քաղաքացի լինելու հիմքում դարձյալ լավ կրթությունն է, գիտելիքն ու հայրենասիրությունը[32]:

XVI. ՄԻՋՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿԱՊԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆ

Փաստաբանների պալատը նախորդ տարիներին կյանքի է կոչել բազմաթիվ նախաձեռնություններ և իրականացրել է մի շարք միջոցառումներ, որոնք նպաստել են միջհամայնքային կապերի զարգացմանը:

Փաստաբանների պալատի միջազգային համագործակցության շրջանակներում 2024 թվականին տեղի են ունեցել մի շարք հանդիպումներ:

Մասնավորապես՝

2024 թվականի ապրիլի 12-ին **ՀՀ փաստաբանների պալատի նախագահ Սիմոն Բաբայանը հյուրընկալել է ԱՄՆ դատավոր Թոդ Էդինսին** (Judge of the Supreme Court of the State of Hawaii of the USA): Հանդիպման ընթացքում քննարկվել են փաստաբանական ինստիտուտի դերը, փաստաբանների կողմից դատավորների գործունեության գնահատման վերաբերյալ Ամերիկայի Միացյալ Նահանգների փորձը և փաստաբանական ինստիտուտին առնչվող մի շարք առանցքային դրույթներ[33]:

[31] Տե՛ս հետևյալ հղումով՝ https://www.advocates.am/news/view/3951.html
[32] Տե՛ս հետևյալ հղումով՝ https://www.advocates.am/news/view/4048.html
[33] Տե՛ս հետևյալ հղումով՝ https://www.advocates.am/news/view/3852.html

2024 թվականի ապրիլի 25-ին Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատում տեղի է ունեցել քննարկում *«Փաստաբանների իրավունքների պաշտպանության և իրավունքի գերակայության ամրապնդման հիմնախնդիրները ժամանակակից մարտահրավերների պայմաններում»* թեմայով: **Հայ և ֆրանսիացի փաստաբանները քննարկել են փաստաբանների իրավունքների պաշտպանության և իրավունքի գերակայության ամրապնդման հիմնախնդիրները[34]:**

2024 թվականի հոկտեմբերի 17-ին **ՀՀ փաստաբանների պալատի նախագահ Սիմոն Բաբայանն ընդունել է Եվրոպական Միության TAIEX դիտարկման առաքելության պատվիրակությանը:** Պատվիրակության կազմում են եղել Եվրոպական հանձնաժողովի Արդարադատության և սպառողների գլխավոր տնօրինության (DG JUST) ներկայացուցիչը Յոհաննես Հոյջերին, փորձագետներ Ջիանլուիջի Պրատոլան և Յենս Վոելկը[35]:

ՀՀ ՓՊ Հանրային պաշտպանի գրասենյակի ղեկավար Գևորգ Մկրտչյանը Փաստաբանների միջազգային միության (UIA) հրավերով 2024 թվականի

[34] *Տե՛ս հետևյալ հղումով՝ https://www.advocates.am/news/view/3867.html*

[35] *Տե՛ս հետևյալ հղումով՝ https://www.advocates.am/news/view/4054.html*

հոկտեմբերի 30-ից նոյեմբերի 03-ը մասնակցել է **Փարիզում տեղի ունեցած տարեկան համագումարին:**

Հաշվետու ժամանակահատվածում ՀՀ փաստաբանների պալատը անդամակցել է ԱՊՀ մասնակից պետությունների բազային կազմակերպությանը կից Հանրային խորհրդին:

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի անդամ, փաստաբան Արսեն Հարությունյանը 2024 թվականի նոյեմբերի 28-ին Մոսկվայում մասնակցել է փաստաբանության ոլորտում **ԱՊՀ անդամ երկրների հիմնարար կազմակերպության առաջին հանդիպմանը**: Կազմակերպությունը միավորել է ԱՊՀ մի շարք երկրների՝ Հայաստանի Հանրապետության, Բելառուսի Հանրապետության, Ղրղզստանի Հանրապետության, Ռուսաստանի Դաշնության, Տաջիկստանի Հանրապետության և Ուզբեկստանի Հանրապետության իրավաբանների մասնագիտական համայնքների ներկայացուցիչների՝ մասնագիտական կապերի ամրապնդման նպատակով: Հանդիպմանը քննարկվել են նաև փաստաբանության ինստիտուտների համագործակցությանն առնչվող հարցեր, հաստատվել է բազային կազմակերպության աշխատանքային ծրագիրը, բազային կազմակերպությունում ստեղծվել է Հանրային խորհուրդ և հաստատվել դրա վերաբերյալ կանոնակարգը[36]:

Փաստաբանների պալատի նախագահ Սիմոն Բաբայանը, Փաստաբանական ակադեմիայի ռեկտոր Արա Զոհրաբյանը և փաստաբան Մարտուն Փանոսյանը՝ Փարիզի փաստաբանների միության նախագահ Պիեր Հոֆմանի հրավերով 2024 թվականի նոյեմբերի 28-ին և 29-ին ներկա են գտնվել **Փարիզի փաստաբանների միության ամենամյա ամփոփիչ միջոցառմանը**: Միջոցառմանը մասնակցել են փաստաբանական համայնքների ներկայացուցիչներ մի քանի տասնյակ պետություններից: Միջազգային գործընկերները Փարիզում մասնակցել են նաև միմյանց միջև համագործակցությունները խթանելուն միտված և փաստաբանությանն առնչվող տարբեր քննարկումների[37]:

[36] *Տե՛ս հետևյալ հղումով՝ https://www.advocates.am/news/view/4097.html*

[37] *Տե՛ս հետևյալ հղումով՝ https://www.advocates.am/news/view/4111.html*

2024 թվականի դեկտեմբերի 9-10-ին **ՀՀ Ազգային ժողովում անցկացվել է Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի իրավական հարցերի և մարդու իրավունքների հանձնաժողովի նիստը**, որի ընթացքում, ի թիվս այլնի, **քննարկվել է նաև «Փաստաբանի մասնագիտության պաշտպանության մասին» կոնվենցիայի նախագիծը: Ելույթով հանդես է եկել նաև ՀՀ փաստաբանների պալատի ներկայացուցիչ Առնոլդ Վարդանյանը[38]:**

2024 թվականի դեկտեմբերի 11-ին **ՀՀ փաստաբանների պալատի նախագահ Սիմոն Բաբայանը հյուրընկալել է Բրյուսելում ֆրանսիական պալատի պատվիրակության նախագահ, Եվրոպայի փաստաբանների և իրավաբանների միությունների խորհրդի (CCBE) ներկայացուցիչ Լորան Փեթթիթին:** Հանդիպման ընթացքում քննարկվել են «Փաստաբանի մասնագիտության պաշտպանության մասին» կոնվենցիայի նախագծի մի շարք դրույթներ և փաստաբանության ոլորտին առնչվող այլ հարցեր[39]:

[38] *Տե՛ս հետևյալ հղումով՝ https://www.advocates.am/news/view/4115.html*

[39] *Տե՛ս հետևյալ հղումով՝ https://www.advocates.am/news/view/4117.html*

2024 թվականի դեկտեմբերի 17-ին **ՀՀ փաստաբանների պալատի նախագահ Սիմոն Բաբայանը հանդիպում է ունեցել Հայաստանում Եվրոպական միության դեսպան Վասիլիս Մարագոսի հետ:** Քննարկվել են փաստաբանության ինստիտուտի համար արդի մարտահրավերներն ու մի շարք խնդիրներ[40]:

Հաշվետու ժամանակահատվածում ՀՀ փաստաբանների պալատի ներկայացուցիչները մասնակցել են հետևյալ միջոցառումներին՝

1. ՄԱԿ-ի Փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի գրասենյակի հրավերով՝ օրենսդրական դաշտի վերաբերյալ Ազգային խորհրդատվության և վավերացման աշխատաժողովին,
2. Եվրոպայի խորհրդի երևանյան գրասենյակի հրավերով՝ «Հայաստանում տեղահանված բնակչության համար մարդու իրավունքների պաշտպանության երաշխիքների ուժեղացում» ծրագրի 2-րդ նիստին, «Երեխաների մասնակցությունը իրենց առողջության վերաբերյալ որոշումներին» աշխատաժողովին,

[40] *Տե՛ս հետևյալ հողումով՝ https://www.advocates.am/news/view/4123.html*

3. Եվրոպայի խորհրդի «Երեխաների իրավունքների պաշտպանությունը հետկոնֆլիկտային համատեքստում» ծրագրի Ղեկավար կոմիտեի երկրորդ նիստին:
4. ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի (ՅՈՒՆԻՍԵՖ) հայաստանյան գրասենյակի հրավերով՝ «Երեխաների առցանց միջավայրում հանցագործություններից պաշտպանելուն ուղղված քաղաքականություն. Բացեր, առաջարկներ, հետագա քայլեր» քննարկմանը,
5. Փաստաբանների միջազգային միության (UIA) հրավերով՝ Ամենամյա կոնգրեսին,
6. Եվրասիական տնտեսական ֆորումին,
7. «Հայ երեխաների իրավունքների պաշտպանությունը հետկոնֆլիկտային համատեքստում» ԵՄ ծրագրի շրջանակներում կլոր սեղան-քննարկմանը:
8. «ATHENA – Մարդու իրավուքնների պաշտպանության խթանում և ազգային հաստատությունների հզորացում» ծրագրի շրջանակներում անցկացված միջոցառմանը,
9. Եվրոպայի խորհրդի խորհրդատուների հետ հանդիպմանը,
10. «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հրավերով «Միասին ընդդեմ մարդկանց թրաֆիքինգի» ծրագրի եզրափակիչ միջոցառմանը,
11. ՄԱԿ-ի փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի գրասենյակից (UNHCR) հրավերով՝ փախստականների համաշխարհային օրվան նվիրված միջոցառմանը,
12. ՀՀ ԱՆ հրավերով Հայ-վրացական իրավական համագործակցության 5-րդ ֆորումի շրջանակներում «Իրավաբանների դերը արդարադատության համակարգում» կայացած նիստին,
13. ԵՄ «Հայաստանում տեղահանված բնակչության համար մարդու իրավունքների պաշտպանության երաշխիքների ուժեղացում» ծրագրի շրջանակներում կազմակերպված միջոցառմանը,
14. CCBE կազմակերպության PECO կոմիտեի նիստերին:

ՓՊ երիտասարդական խորհրդի միջազգային համագործակցության շրջանակներում, Պալատի ներկայացուցիչները մասնակցել են ԱՊՀ երկրների փաստաբանական միությունների երիտասարդական կառույցների առաջին առցանց նիստին, որի ընթացքում ներկայացվել են Հայաստանի փորձն ու կարգավիճակը, նաև քննարկվել է այս տարի առաջին առերես հանդիպում-նիստ անցկացնելու հարցը, և նախնական համաձայնություն է ձեռք բերվել այն Հայաստանում անցկացնելու վերաբերյալ:

➢ ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՄԱԿ ՓԳՀ-Ի ՄԻՋԵՎ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

Պալատի և Հայաստանում ՄԱԿ ՓԳՀ-ի ներկայացուցչության միջև 2024 թվականին կնքված համագործակցության համաձայնագրի հիման վրա նույն թվականի մարտ ամսից սկսվել է ՄԱԿ ՓԳՀ մտահոգության ներքո գտնվող անձանց, մասնավորապես՝ ապաստան հայցողներին և փախստականներին, ներառյալ՝ արցախցիներին, որակյալ և անվճար իրավաբանական օգնություն տրամադրելու նոր ծրագիր:

Հանրային պաշտպանի գրասենյակից զատ, Ծրագրի շրջանակներում, Պալատը տվյալ ոլորտում մասնագիտացած փաստաբանների միջոցով ևս իրավաբանական օգնություն է տրամադրել ապաստան հայցողներին և փախստականներին: Բացի այդ, ծրագրի շրջանակներում Պալատում 2024 թվականի մարտ ամսից շարունակել է գործել նաև **ապաստանի հարցերով խորհրդատու-փորձագետի** հաստիքը, ով համակարգել է ծրագրի փաստաբանների կողմից իրավաբանական օգնության տրամադրումն ապաստան հայցողներին և փախստականներին և աջակցել է հանրային պաշտպաններին նշված թիրախային անձանց իրավաբանական օգնություն տրամադրելիս:

Դեռևս 2023 թվականին ՄԱԿ ՓԳՀ-ի հետ համագործակցությամբ իրականացված ծրագրի շրջանակներում պատրաստվել էին տեղեկատվական պաստառներ, ստենդներ և երեք տեսակի լիֆլեթներ, որոնք թարգմանվել էին ապաստան հայցողների կողմից **առավել շատ օգտագործվող 8 լեզուներով**: Արդեն 2024 թվականի ընթացքում դրանք տեղադրվել ու մշտապես հասանելի են եղել Հանրային պաշտպանի գրասենյակում: Դրանք տեղեկատվություն են պարունակում ապաստանի տրամադրման ընթացակարգում անվճար իրավաբանական օգնության մատուցման, հարցազրույցի փուլի և քրեական վարույթներով և հանձնման ընթացակարգերում ապաստան հայցողներին անվճար իրավաբանական օգնության տրամադրման մասին:

2024 թվականի ընթացքում դրանց առաջին խմբաքանակը տրամադրվել է Քրեակատարողական ծառայությանը, որն ապահովելու էր դրանց հասանելիությունը համապատասխան քրեակատարողական հիմնարկներում ազատությունից զրկված օտարերկրացիներին: Մեկ այլ խմբաքանակ էլ տրամադրվել է Միգրացիայի և քաղաքացիության ծառայությանը, որը տեղադրվել է ապաստան հայցողների սպասասրահում:

Ծրագրի շրջանակներում ապահովվել է նաև փախստականներին ու ապաստան հայցողներին իրավաբանական օգնության տրամադրման ընթացքում **թարգմանչական ծառայությունների** մատուցումը: 2024 թվականի ընթացքում Հայկական կարմիր խաչի ընկերության միջոցով թարգմանչի բանավոր ծառայության համար ընկերությանը խնդրագրեր են ներկայացվել **298 անգամ (ընդհանուր 120 ժամ 47 րոպե)**, որից արաբերենի համար՝ 167 անգամ, պարսկերենի համար՝ 84, քրդերենի համար՝ 19, անգլերենի համար՝ 11, ֆրանսերենի համար՝ 6, ռուսերենի համար՝ 6, թուրքերենի համար՝ 3 և սորանի համար՝ 2 անգամ:

2024 թվականի ընթացքում Ծրագրի փաստաբանների և հանրային պաշտպանների կողմից ապաստան հայցողների գործով կազմված հայցադիմումների, վերաքննիչ և վճռաբեկ բողոքների հետ կապված վերջիններս խորհրդակցել են խորհրդատու-փորձագետի և Ծրագրի իրավաբանի հետ ծագման երկրի մասին տեղեկություններ հայթայթելու անհրաժեշտության մասին, ինչի արդյունքում բազմաթիվ գործերով Ծրագրի փաստաբաններին խորհրդատու-փորձագետի, ինչպես նաև Ծրագրի իրավաբանի կողմից տրամադրվել են ծագման երկրի մասին տեղեկություններ:

Հարկ է ընդգծել, որ փորձագիտական աջակցություն է տրամադրվել նաև ապաստան հայցողների գործերով զբաղվող մասնավոր գործունեություն իրականացնող փաստաբաններին:

Ծրագրի շրջանակներում 2024 թվականի ընթացքում կազմակերպվել է նաև թվով 4 աշխատաժողով, մասնավորապես՝

2024 թվականի հունիսի 29-30-ը կազմակերպվել է **«Իրավաբանական օգնության տրամադրումը ապաստան հայցողներին» թեմայով** աշխատաժողով: Աշխատաժողովին մասնակցել են Ծրագրի իրավաբանական թիմի անդամները, ինչպես նաև քաղաքացիաիրավական մասնագիտացմամբ հանրային պաշտպանները:

2024 թվականի հոկտեմբերի 19-20-ը կազմակերպվել է աշխատաժողով հանրային պաշտպանների և Ծրագրի փաստաբանների համար **«ՄԻԵԴ չափանիշները և ընթացակարգերն ապաստանի վարույթում» թեմայով:**

2024 թվականի նոյեմբերի 16-17-ը և 2024 թվականի դեկտեմբերի 14-15-ը երկու աշխատաժողով է կազմակերպվել **«Ապաստանը և քրեական վարույթը» թեմայով:**

➢ «ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐԻ ՃԳՆԱԺԱՄԸ. ԴԻՄԱԿԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆ ԲՈԼՈՐԻ ՀԱՄԱՐ» ԾՐԱԳԻՐԸ

Միավորված ազգերի կազմակերպության զարգացման ծրագրի շրջանակներում 2024 թվականին իրականացվել է «Հայաստանում փախստականների ճգնաժամը. Դիմակայունություն բոլորի համար» ծրագիրը:

Ծրագրի նպատակն է եղել բարելավել իրավական օգնության ծառայությունների արդյունավետությունը՝ Փաստաբանների պալատի, Հանրային պաշտպանի գրասենյակի կարողությունները զարգացնելու և հասարակության իրազեկվածությունն ընդլայնելու միջոցով:

Ծրագրի շրջանակներում փաստաբանների վերապատրաստման և կարողությունների զարգացման նպատակով կազմակերպվել են երեք արտագնա սեմինարներ՝ Սյունիքի մարզի և հարակից բնակավայրերի փաստաբանների համար, Շիրակի մարզի և հարակից բնակավայրերի փաստաբանների համար, ինչպես նաև Տավուշի մարզի և հարակից բնակավայրերի փաստաբանների համար:

Բոլոր երեք մարզերում կազմակերպված սեմինարներին մասնակցության առաջնահերթություն է տրվել Արցախից տեղահանված փաստաբաններին:

Հասարակության իրավագիտակցությունը և իրազեկվածությունը բարձրացնելու նպատակով Ծրագրի շրջանակներում պատրաստվել են տեսանյութեր Հարկային փոփոխությունների արդյունքում անվճար իրավաբանական օգնության հարկման[41], Հանրային պաշտպանի գրասենյակի կողմից տրամադրվող անվճար իրավաբանական օգնության վերաբերյալ[42], ինչպես նաև մի շարք այլ վերաբերելի թեմաներով:

Հասարակության իրազեկվածությունը անվճար իրավաբանական օգնության վերաբերյալ բարձրացնելու նպատակով պատրաստվել են թվով 1000 տեղեկատվական պաստառներ՝ անվճար իրավաբանական օգնություն ստանալու կարգի, դրա շահառուների, գրասենյակի գործունեության և տեղակայման վայրերի մասին: Պաստառները փոխանցվել են մարզպետարաններին, որպեսզի փակցվեն համայնքապետարանների տեղեկատվական տախտակների վրա:

Հաշվի առնելով Հանրային պաշտպանի գրասենյակի մարզային նստավայրերի կարիքները, և դրանց բավարարման առաջնահերթությունը որոշում է կայացվել իրականացնել Հանրային պաշտպանի գրասենյակի Գորիս քաղաքի նստավայրի վերանորոգում: Հին գույքը փոխարինվել է նորով, գնվել է նոր տեխնիկական սարք:

Գնվել և շահագործման են հանձնվել ՀՀ փաստաբանների պալատի հանրային

[41] *Տե՛ս հետևյալ հղումով՝* https://www.facebook.com/100067065235366/videos/1099926648117567

[42] *Տե՛ս հետևյալ հղումով՝* https://www.facebook.com/100067065235366/videos/602187005727282

հաղորդակցման կարողությունները բարելավող սարքավորումներ:

❖ ԲԱԺԻՆ II. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ

I. ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒԹՆՈՒԹՅՈՒՆԸ

➢ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԽՈՐՀՈՒՐԴԸ

Փաստաբանների պալատի խորհուրդը փաստաբանների պալատի գործադիր, ինչպես նաև կարգապահական վարույթի շրջանակներում ընդունված որոշումները վերանայող մարմինն է:

Փաստաբանների պալատի խորհուրդը կազմավորվում է չորս տարի ժամկետով՝ փաստաբանների պալատի ընդհանուր ժողովի կողմից ընտրված փաստաբաններից (բացառությամբ խորհրդի նախագահի):

Փաստաբանների պալատի խորհուրդն ունի **տասներկու անդամ**՝ չհաշված խորհրդի նախագահը: Փաստաբանների պալատի նախագահն ի պաշտոնե փաստաբանների պալատի խորհրդի նախագահն է:

Խորհուրդը 2024թ. անցկացրել է ընդհանուր 20 ընթացիկ նիստ, որոնցից՝ 2-ն առկա ձևաչափով, 18-ը համակցված՝ առկա և հեռավար եղանակներով: Նիստերի արդյունքում կայացրել է 269 որոշում:

➢ ԳԻՏԱՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԸ

2024 թվականի ընթացքում իր գործունեությունն է շարունակել Փաստաբանների պալատի խորհրդին առընթեր գիտավերլուծական կենտրոնը:

2011 թվականից սկսած գիտավերլուծական կենտրոնը Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի հետ ունեցած պայմանավորվածության համաձայն սահմանադրական դատարանում քննվող գործերով որպես երրորդ կողմի կարծիք (amicus curiae) ներկայացնում է իր գրավոր մեկնաբանությունը՝ վիճարկվող նորմերի սահմանադրականության վերաբերյալ:

2024 թվականի հունվարի 12-ին ՀՀ ՓՊ խորհրդին կից գիտավերլուծական կենտրոնը գրավոր կարծիք է հայտնել *ՀՀ սահմանադրական դատարանում քննության ընդունված՝ Դավիթ Փոլադյանի անհատական դիմումի հիման վրա 01.07.1998թ. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործով* [43]*:*

2024 թվականի ապրիլի 25-ին ՀՀ փաստաբանների պալատի անունից ներկայացվել է գրավոր կարծիք *ՀՀ սահմանադրական դատարանում քննության ընդունված՝ Սուրեն Անտոնյանի դիմումի հիման վրա՝ «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 146-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի, 142-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, 142-րդ հոդվածի 6-րդ մասի 1-ին կետի և 144-րդ հոդվածի 1.1-ին մասի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործով:*

2024 թվականի հունիսի 17-ին ՀՀ փաստաբանների պալատը դիմել է Հայաստանի Հանրապետության **Նախագահին** ներկայացնելով կարծիք՝ *«Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» (Կ-839-03.05.2024-ՏՀ-011/2ԱՄԲ.) ՀՀ օրենքի Սահմանադրությանն առերևույթ հակասելու, ըստ այդմ այն չստորագրելու և Սահմանադրությանն օրենքի համապատասխանությունը որոշելու հարցով Սահմանադրական դատարան դիմելու վերաբերյալ:*

2024 թվականի հունիսի 25-ին թիվ ՎԴ/6775/05/23 վարչական գործով թույլ տրված խախտումների առնչությամբ ՀՀ փաստաբանների պալատը դիմել է **Մարդու իրավունքների եվրոպական դատարան**: Ուղարկված գանգատին շնորհվել է 19489/24 համարը:

2024 թվականի հուլիսի 4-ին ՀՀ փաստաբանների պալատը դիմում է ներկայացրել **Սահմանադրական դատարան**՝ խնդրելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը, 10-րդ հոդվածի 1-ին մասը, 68-րդ հոդվածը, 80-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածը, «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 56-րդ հոդվածի 1-ին մասն իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությամբ ճանաչել ՀՀ Սահմանադրության 26-րդ հոդվածի 1-ին մասին, 28-րդ, 29-րդ, 61-րդ հոդվածներին, 63-րդ հոդվածի 1-ին մասին, 64-րդ հոդվածի 2-րդ մասին, 74-րդ, 78-րդ, 81-րդ հոդվածներին հակասող և անվավեր՝ հաշվի առնելով, որ դրանք հանգեցրել են՝ ՀՀ փաստաբանների պալատի՝ արդար

[43] Տե՛ս հետևյալ հղումով՝ *https://advocates.am/images/pdf_files/2024/kartsiq_2024.pdf*

դատաքննության իրավունքի և վերջինիս բաղադրիչը կազմող դատարանի մատչելիության իրավունքի անհամաչափ սահմանափակման, տարբերակված ձևով՝ առանց օբյեկտիվ հիմքի և իրավաչափ նպատակի, իրավական պաշտպանություն հայցելու՝ ՀՀ Սահմանադրությամբ նախատեսված երաշխիքների խախտման, անհամատեղելի են ՀՀ փաստաբանների պալատի՝ որպես ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված փաստաբանների ինքնակառավարումն ապահովող մարմնի կողմից իր անդամների իրավունքների և օրինական շահերի պաշտպանության երաշխիքների հետ, չեն համապատասխանում ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված՝ ընդարձակ իմաստով խոշտանգումների բացարձակ արգելքի ընթացակարգային երաշխիքներին:

2024 թվականի հուլիսի 07-ին ՀՀ փաստաբանների պալատը դիմել է **Մարդու իրավունքների պաշտպանին՝** ներկայացնելով կարծիք «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՕ-285-Ն ՀՀ օրենքի Սահմանադրությանն առերևույթ հակասելու, և Սահմանադրությանն օրենքի համապատասխանությունը որոշելու հարցով Սահմանադրական դատարան դիմելու վերաբերյալ:

➢ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ

«Փաստաբանության մասին» օրենքի, ինչպես նաև ՀՀ փաստաբանների պալատի կանոնադրության համաձայն՝ ***ՀՀ փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ գործն ըստ էության քննող և որոշում կայացնող մարմինն է:***

Փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը (**այսուհետ նաև՝ Հանձնաժողով**) կազմավորվում է չորս տարի ժամկետով՝ ՀՀ փաստաբանների պալատի ընդհանուր ժողովի կողմից ընտրված ինը փաստաբաններից:

Փաստաբանների պալատի հանձնաժողովը՝

1) քննարկում և լուծում է փաստաբաններին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հետ կապված հարցեր.

2) իրականացնում է «Փաստաբանության մասին» օրենքով և ՀՀ փաստաբանների պալատի կանոնադրությամբ սահմանված այլ լիազորություններ:

Հանձնաժողովը 2024թ. անցկացրել է ընդհանուր 113[44] նիստ, որոնցից՝ 50 նիստ անցկացվել է համակցված հեռավար և առկա ձևաչափով, իսկ 63 նիստ՝ առկա ձևաչափով:

[44] 37 նիստ հրավիրվել է Հանձնաժողովի որոշման եզրափակիչ մասը հրապարակելու նպատակով:

2024 թվականին Հանձնաժողովը քննել և դրանց արդյունքներով կայացրել է 214 որոշում, 1 գործով կայացվել է կասեցման որոշում[45]:

➢ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի որակավորման հանձնաժողովը (այսուհետ, նաև՝ Որակավորման հանձնաժողով) որակավորման քննությունները կազմակերպելու և դրանց արդյունքներն ամփոփելու նպատակով երկու տարի ժամկետով կազմավորված, ինն անդամից բաղկացած մարմին է:

«Փաստաբանության մասին» օրենքի 12-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն՝ *փաստաբանների պալատի որակավորման հանձնաժողովը կազմավորվում է երկու տարի ժամկետով՝ ինն անդամի կազմով, ներկայացուցչության հետևյալ համամասնությամբ.*

1) փաստաբանների պալատի խորհրդի ընտրած հինգ փաստաբան.

2) Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությունից մեկ ներկայացուցիչ՝ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի ներկայացմամբ.

3) Վճռաբեկ դատարանից մեկ դատավոր՝ Վճռաբեկ դատարանի նախագահի ներկայացմամբ.

4) երկու իրավաբան գիտնական՝ սույն հոդվածով սահմանված կարգին և պայմաններին համապատասխան:

Փաստաբանների պալատի որակավորման հանձնաժողովի լիազորությունները, նիստերի գումարման կարգը և Փաստաբանների պալատի կանոնադրությամբ չկարգավորված հարցերը կարգավորվում են Փաստաբանների պալատի խորհրդի կողմից ընդունված որակավորման հանձնաժողովի ձևավորման և գործունեության կարգով:

ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի 21.03.2023թ. թիվ 8/11-Ա որոշմամբ երկու տարի ժամկետով կազմավորվել է փաստաբանների պալատի որակավորման հանձնաժողով:

2024 թվականին կազմակերպված որակավորման քննություններն անցկացվել են երկու փուլով՝ առաջին փուլի ընթացքում հավակնորդները կատարել են գրավոր առաջադրանք, իսկ երկրորդ փուլի ընթացքում պատասխանել են քննատոմսի և Որակավորման հանձնաժողովի անդամների հարցերին:

[45] *Վիճակագրական տվյալները տե՛ս «Վիճակագրական տվյալներ» ենթաբաժնում:*

2024 թվականի գարնանը կազմակերպված որակավորման քննություններին մասնակցելու համար դիմում են ներկայացրել ընդհանուր 106 հավակնորդ, որից 101-ը ՀՀ փաստաբանական ակադեմիան ավարտած ունկնդիրներ, իսկ 5 հավակնորդ՝ «Փաստաբանության մասին» օրենքի 45.11-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ և 3-րդ կետերի հիմքով որակավորման քննություններին մասնակցություն իրավունք ունեցող անձինք:

ՀՀ փաստաբանական ակադեմիան ավարտած ունկնդիրների (այսուհետ՝ Ունկնդիր) քաղաքացիաիրավական և վարչաիրավական ուղղվածության դիմորդների քննության գրավոր փուլն անցկացվել է 22.05.2024 թվականին, որին մասնակցել է 69 հավակնորդ:

Ունկնդիրների քրեաիրավական ուղղվածության դիմորդների քննության գրավոր փուլն անցկացվել է 23.05.2023 թվականին, որին մասնակցել է 37 հավակնորդ:

Ունկնդիրների քաղաքացիաիրավական և վարչաիրավական ուղղվածության դիմորդների քննության բանավոր փուլն անցկացվել է 19.06.2024 թվականին, որին մասնակցել է 58 հավակնորդ:

Ունկնդիրների քրեաիրավական ուղղվածության դիմորդների քննության բանավոր փուլն անցկացվել է 20.06.2024 թվականին, որին մասնակցել է 33 հավակնորդ:

«Փաստաբանության մասին» օրենքի 45.11-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ և 3-րդ կետերի հիմքով որակավորման քննություններին մասնակցություն իրավունք ունեցող անձանց գրավոր փուլն անցկացվել է 30.05.2024 թվականին, որին մասնակցել է 5 դիմորդ:

2024թ թվականի գարնանը կազմակերպված որակավորման քննությունները ընդհանուր հանձնել է 82 հավակնորդ (53 քաղ./29 քր.), չի հանձնել 23 հավակնորդ (15 քաղ./ 8 քր.)

2024 թվականի գարնանը որակավորման քննություններին մասնակցելու դիմում ներկայացրած հավակնորդներից 1-ը քննությանը չի ներկայացել:

2024թ. գարնանը կազմակերպված որակավորման քննություններին մասնակցած հավակնորդների ընդհանուր քանակը՝		
82 (78%) ***հավակնորդ հանձնել է***		***23 (22%)*** ***հավակնորդ չի հանձնել***

2024 թվականի աշնանը կազմակերպված որակավորման քննությունները անցկացվել են երկու փուլով, որին մասնակցելու համար դիմում է ներկայացրել 136 հավակնորդ:

Քաղաքացիաիրավական և վարչաիրավական ուղղվածության դիմորդների քննության գրավոր փուլն անցկացվել է 29.11.2024 թվականին, որին մասնակցել է 85 հավակնորդ:

Քրեաիրավական ուղղվածության դիմորդների քննության գրավոր փուլն անցկացվել է 30.11.2024 թվականին, որին մասնակցել է 49 հավակնորդ:

Քաղաքացիաիրավական և վարչաիրավական ուղղվածության դիմորդների քննության բանավոր փուլն անցկացվել է 14.11.2024 թվականին, որին մասնակցել է 75 հավակնորդ:

Քրեաիրավական ուղղվածության դիմորդների քննության բանավոր փուլն անցկացվել է 15.11.2024 թվականին, որին մասնակցել է 46 հավակնորդ:

2024 թվականի աշնանը կազմակերպված որակավորման քննությունները հանձնել է 110 հավակնորդ (66 քաղ./ 44 քր.), չի հանձնել 24 հավակնորդ (քաղ.19 / 5 քր.)

2024 թվականի աշնանը որակավորման քննություններին մասնակցելու դիմում ներկայացրած հավակնորդներից 2-ը քննությանը չի ներկայացել:

2023թ. աշնանը կազմակերպված որակավորման քննություններին մասնակցած հավակնորդների ընդհանուր քանակը՝ ____		
110 (82,09%) հավակնորդ հանձնել է		***24 (17,9%) հավակնորդ չի հանձնել***

II. ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐ

➢ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿՈՂՄԻՑ ՔՆՆՎԱԾ և ԱՎԱՐՏՎԱԾ ԳՈՐԾԵՐԻ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

1	**Ավարտված կարգապահական վարույթները, այդ թվում՝**	**214**
1.1	կարճված	**98**
1.2	պատասխանատվության ենթարկված	**116**

2	**Կարճված վարույթները ըստ հիմքերի, այդ թվում՝**	**98**
2.1	կարճված փաստաբանների բողոքների հիման վրա հարուցվածներից	**0**
2.2	կարճված վստահորդների բողոքների հիման վրա հարուցվածներից	**13**
2.3	հակառակորդ կողմի բողոքի հիմքով հարուցվածներից	**3**
2.4	կարճված այլ հիմքերով հարուցվածներից (ՀԼՄ, քննչական մարմին)	**5**
2.5	Կարճված անդամավճարը չվճարելու հիմքով հարուցված գործերից	**1**
2.6	Կարճված վերապատրաստման դասընթացներին չմասնակցելու հիմքով հարուցված գործերից	**76**

3	**Պատասխանատվության ենթարկվածներ**	**116**
3.1	փաստաբանների բողոքների հիման վրա հարուցվածներից	**0**
3.2	վստահորդների բողոքների հիման վրա հարուցվածներից	**16**
3.3	հակառակորդ կողմի բողոքի հիմքով հարուցվածներից	**1**
3.4	այլ հիմքերով հարուցվածներից (ՀԼՄ, քննչական մարմին)	**5**
3.5	անդամավճարը չվճարելու հիմքով հարուցված գործերից	**58**
3.6	վերապատրաստման դասընթացներին չմասնակցելու հիմքով հարուցված գործերից	**36**

ՔՆՆՎԱԾ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՔԱՆԱԿԸ՝
214

Կարճված վարույթներ՝ 98 (46%) ադ թվում՝		Կարգապահական տույժով ավարտված վարույթներ՝ 116 (54%) այդ թվում՝

➢ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

№	Վիճակագրական տվյալի չափանիշը	Վիճակագրական տվյալը
1	Կայացած նիստերի քանակը	**113**
2	Կայացված որոշումների ընդհանուր քանակը	**214**

➢ ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԽՈՐՀՐԴԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

№	Վիճակագրական տվյալի չափանիշը	Վիճակագրական տվյալը
1	Խորհրդի ընթացիկ նիստերի քանակը	**20**
3	Խորհրդի բողոքարկման վարույթների քանակը	**16 (16 մերժում)**

➢ ԽՈՐՀՐԴԻ ԸՆԹԱՑԻԿ ՆԻՍՏԵՐԻ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

№	Վիճակագրական տվյալի չափանիշը	Վիճակագրական տվյալը
1	փաստաբանական գործունեության արտոնագիր տալու հարց	**16**
2	փաստաբանական գործունեության արտոնագրի գործողությունը կասեցնելու	**83**

	հարց	
3	փաստաբանական գործունեության արտոնագրի գործողությունը վերականգնելու հարց	**58**
4	փաստաբանական գործունեության արտոնագրի գործունեությունը դադարեցնելու հարց	**12**
5	այլ երկրի փաստաբանին մեկ տարի ժամկետով ՀՀ տարածքում փաստաբանական գործունեություն իրականացնելու հավատարմագիր տրամադրելու հարց	**19**
6	անդամավճարի արտոնության հարց	**11**
7	անդամավճարի տարաժամկետ վճարման ժամանակացույց սահմանելու հարց	**7**
8	հաշվետվությունները հաստատելու հարց	**9**
9	փաստաբանի օգնականի արտոնագիր տրամադրելու հարց	**19**
10	փաստաբանի օգնականի արտոնագրի գործողության ժամկետը երկարաձգելու հարց	**3**
11	ՀՀ փաստաբանների պալատի անունից խոշոր գործարք կնքելու համաձայնություն (թույլտվություն) տալու հարց	**2**
12	Կարգեր հաստատելու և փոփոխություններ կատարելու հարցեր	**6**
13	Ծրագրեր հաստատելու հարցեր (բյուջե, հաստիքացուցակ)	**3**
14	դիմում և բողոք քննարկելու մասին հարցեր	**10**

15	Այլ	11

➢ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՐՈՒՑՎԱԾ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹՆԵՐԻ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

համեմատության ժամանակահատվածը՝ 2023- 2024 թվականներ

№	Փաստաբանների նկատմամբ 2024 թվականին հարուցված վարույթներ (քանակ)	2023	2024	տարբեր. թվային արտահայտմամբ	տարբեր. տոկոսային արտահայտմամբ
		99	**162**	**63**	**+39%**
1.	Փաստաբանների դեմ բողոքների հիման վրա հարուցված վարույթների թիվը	**40**	**50**	**10**	**+20%**
2.	Անդամավճարը չվճարելու հիմքով հարուցված կարգապահական վարույթների թիվը	**59**	**0**	**-59**	**-**
3.	Վերապատրաստման դասընթացներին չմասնակցելու հիմքով հարուցված կարգապահական վարույթների թիվը	**0**	**112**	**+112**	**-**

➢ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ԴԵՄ ՆԵՐԿԱՅԱՑՐԱԾ ԲՈՂՈՔՆԵՐԻ ԵՎ ՀԱՐՈՒՑՎԱԾ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹՆԵՐԻ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

№	1.	2.	1 և 2

	Փաստաբանների դեմ ստացված բողոքների ընդհանուր քանակը այդ թվում՝	***163***	***Փաստաբանների դեմ ներկայացված բողոքների հիման վրա հարուցված կարգապահական վարույթներ, այդ թվում՝***	***50***	
1.1	փաստաբանների վստահորդների և քաղաքացիների բողոքներ	**147**	փաստաբանների վստահորդների և քաղաքացիների բողոքների հիման վրա հարուցված կարգապահական վարույթներ	**38**	***26%***
1.2	փաստաբանների բողոքներ փաստաբանների դեմ	**2**	փաստաբանների բողոքների հիման վրա հարուցված կարգապահական վարույթներ	**1**	**33%**
1.3	այլ բողոքներ	**14**	այլ բողոքների հիման վրա հարուցված կարգապահական վարույթներ	**11**	***78.5%***

2024 թվականի հունվարից դեկտեմբեր (ներառյալ) ամիսների ընթացքում Փաստաբանների պալատում փաստաբանների դեմ ստացվել են ընդհանուրը **163 բողոք,** որոնցից գերակշիռ մասը՝ **147**-ը ներկայացվել են քաղաքացիների և կազմակերպությունների կողմից, որոնք հանդիսանում են տվյալ փաստաբանի վստահորդ (այդ թվում՝ նախկին վստահորդ) կամ փաստաբանի վստահորդի հակառակորդ կողմ:

Փաստաբանների դեմ ներկայացված բողոքների և փաստաբանների նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումների ընդհանուր վիճակագրական թվերի համեմատական վերլուծության արդյունքները ցույց են տալիս, որ փաստաբանների դեմ ներկայացված ընդհանուր **163 բողոքներից կարգապահական վարույթ հարուցվել է ընդամենը 50 բողոքի հիման վրա**, այսինքն՝ փաստաբանների նկատմամբ կարգապահական վարույթ հարուցվել է ստացված բողոքների ընդհանուր թվի 31%-ը կազմող դեպքերում:

Փաստաբանների վստահորդների, քաղաքացիների և փաստաբանների բողոքների հիման վրա հարուցված կարգապահական վարույթները կազմում են փաստաբանների նկատմամբ հարուցված կարգապահական վարույթների ընդհանուր թվի **70%-ը,** իսկ այլ բողոքների հիման վրա հարուցված կարգապահական վարույթները կազմում են փաստաբանների նկատմամբ հարուցված կարգապահական վարույթների ընդհանուր թվի **30%-ը:**

2024 թվականի հունվարից դեկտեմբեր (ներառյալ) ամիսների ընթացքում Փաստաբանների պալատում դատարաններից մուտքագրվել է փաստաբանների նկատմամբ դատական սանկցիա կիրառելու մասին 18 գրություն, որոնք ընդունվել են ի գիտություն:

➢ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԳՈՐԾԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

համեմատական ժամանակահատված՝ 2023 և 2024 թվականներ

№	Վիճակագրական տվյալի չափանիշը (համեմատության առարկան)	2023	2024	տարբերությունը թվային արտահայտմամբ	տարբերությունը տոկոսային արտահայտմամբ
1	Մտից փաստաթղթերի ընդհանուր թիվը	3270	3314	**44**	**1.3%**
2	Ելից փաստաթղթերի ընդհանուր թիվը՝ ներառյալ կարգապահական գործերով	2149	2253	**104**	**4.6%**

➢ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՄԲ ՔՆՆՎՈՂ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԳՈՐԾԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՌՈՏ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ.

2024 թվականի ընթացքում Փաստաբանների պալատի մասնակցությամբ քննվել է

4 դատական գործ, որից՝

3 գործ	0 գործ	0 գործ	0 գործ	0 գործ	1 գործ
Պալատի խորհրդի որոշումներով կարգապա-հական պատասխա-նատվության ենթարկված փաստաբան-ների կողմից Պալատի խորհրդի որոշումների վիճարկում	Պալատի խորհրդի այլ (կարգա-պահական պատաս-խանատ-վության հետ չկապված) որոշումների վիճարկում	Փաստաբանի նկատմամբ կարգա-պահական վարույթ հարուցելու մասին Պալատի նախագահի որոշումների վիճարկում	Փաստաբանի նկատմամբ կարգա-պահական վարույթ հարուցելը մերժելու մասին Պալատի նախագահի որոշումների վիճարկում	Այլ հարցեր, օրինակ՝ Պալատի նախագահի այլ (կարգա-պահական պատաս-խանատ-վության հետ չկապված) որոշումների վիճարկում, որակա-վորման քննություն-ները չհանձնած հավակնորդի կողմից իր մասով որակա-վորման քննության արդյունք-ները վիճարկում	Փաստաբանի կողմից չվճարված տուգանքի գումարի բռնագանձման պահանջով գործեր (այդ թվում վճարման կարգադրություն) հայցվոր (դիմող) է հանդիսացել Պալատը:

➢ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՄԲ ՔՆՆՎՈՂ ՎԱՐՉԱԿԱՆ ԳՈՐԾԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՌՈՏ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ.

2024 թվականի ընթացքում Փաստաբանների պալատի մասնակցությամբ քննվել է **43 դատական գործ՝ որից**

36 գործ	1 գործ	0 գործ	1 գործ	2 գործ	3 գործ
Պալատի խորհրդի/ Կարգապահական հանձնաժողովի որոշումներով կարգապա-հական պատասխա-նատվության ենթարկված փաստաբանների կողմից Պալատի Հանձնաժողովի և Խորհրդի որոշումների վիճարկում	Պալատի խորհրդի այլ (կարգա-պահական պատաս-խանատ-վության հետ չկապված) որոշումների վիճարկում	Փաստաբանի նկատմամբ կարգա-պահական վարույթ հարուցելու մասին Պալատի նախագահի որոշումների վիճարկում	Փաստաբանի նկատմամբ կարգա-պահական վարույթ հարուցելը մերժելու մասին Պալատի նախագահի որոշումների վիճարկում	Այլ հարցեր, օրինակ՝ Պալատի նախագահի այլ (կարգա-պահական պատաս-խանատ-վության հետ չկապված) որոշումների վիճարկում, որակա-վորման քննություն-ները չհանձնած հավակնորդի կողմից իր մասով որակա-վորման քննության արդյունք-ները վիճարկում	Այլ հարցեր, հայցվոր (դիմող) է հանդիսացել Պալատը:

➢ ՀԱՆՐԱՅԻՆ ՊԱՇՏՊԱՆԻ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ ԿՈՂՄԻՑ ԱՊԱՀՈՎՎԱԾ ԱՆՎՃԱՐ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ ՔԱՆԱԿԻ, ԸՆԹԱՑՔԻ և ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԹՎԱՅԻՆ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ*

№	Արդյունքի չափորոշիչներ	Գործերի թիվը (հատ)		
		Նախորդ ժամանակա-հատվածից փոխանցված	Հաշվետու ժամանակա-հատվածի ընթացքում ստացված	Ընդհանուր վարված
1	**Քրեական գործերի թիվը, որից.**	5062	18272	23334
1.1	Նախաքննությունում	1104	8693	9797
1.2	Առաջին ատյանի դատարանում	3578	8157	11735
1.3	Վերաքննիչ դատարանում	132	850	982
1.4	Վճռաբեկ դատարանում	13	30	43
1.5	Հանձման գործերով	16	90	106
1.6	Տուժողի և այլ քրեական գործերով	219	360	579
1.7	**Բանավոր և գրավոր խորհրդատվություններով**			668
	Ընդհանուր			23910
2	**Քաղաքացիական (վարչական և սահմանադրական) գործերի ընդհանուր թիվը, որից.**	798	1139	1937
2.1	Սահմանադրական դատարանում	-	-	-
2.2	Առաջին ատյանի դատարանում, որից.	777	1086	1863
2.2.1	քաղաքացիական (նաև սնանկության և հակակոռուպցիոն)	698	920	1618
2.2.2	Վարչական	79	166	245
2.3	Վերաքննիչ դատարանում, որից.	19	53	72
2.3.1	քաղաքացիական (նաև սնանկության և հակակոռուպցիոն)	12	30	42
2.3.2	Վարչական	7	23	30
2.4	Վճռաբեկ դատարանում	1	-	1

* ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ.
Ներկայացված տեղեկատվությունը արտահանվել է «Էլեկտրոնային հանրային պաշտպան» ծրագրի միջոցով, իսկ հայտնաբերված անճշտությունները ենթարկվել են խմբագրության

2.4.1	*քաղաքացիական (նաև սնանկության և հակակոռուպցիոն)*	***1***	-	***1***
2.4.2	*Վարչական*	-	-	***1***
2.5	*Բանավոր և գրավոր խորհրդատվություններով*			***5983***
	Ընդհանուր			***7920***
3	***Մերժված և դադարեցված դիմումների թիվը, որից.***			***35***
3.1	***Մերժված***			***1***
3.2	***Դադարեցված***			***34***
4	***Հանրային պաշտպանների դեմ բողոքների քանակը***			***77***
	Ընդհանուր գործերի թիվը (1-ին և 2-րդ կետերի հանրագումարը)			***31830***

➢ ***ՀՊԳ դիմած քաղաքացիներն՝ ըստ կատեգորիաների***

N°	Կատեգորիայի անվանումը	«Փաստաբանության մասին» օրենքի համապատասխան հոդվածը, մասը և կետը	Քաղաքացիների թիվը
1	Հայաստանի Հանրապետության սահմանների պաշտպանության ժամանակ զոհված (մահացած) զինծառայողի ընտանիքի անդամներ	41-5-1	179
2	1-ին և 2-րդ խմբի հաշմանդամներ	41-5-2	647
3	դատապարտյալներ	41-5-3	554
4	ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառված՝ 0-ից բարձր անապահովության միավոր ունեցող ընտանիքի անդամներ	41-5-4	1282
5	Հայրենական մեծ պատերազմի և Հայաստանի Հանրապետության սահմանների պաշտպանության ժամանակ մարտական գործողությունների մասնակիցներ	41-5-5	290
6	գործազուրկներ	41-5-6	1431
7	միայնակ բնակվող կենսաթոշակառուներ	41-5-7	278

8	առանց ծնողական խնամքի մնացած երեխաներ, ինչպես նաև առանց ծնողական խնամքի մնացած երեխաների թվին պատկանող անձինք	41-5-8	6
9	փախստականներ	41-5-9	188
10	Հայաստանի Հանրապետությունում ժամանակավոր պաշտպանություն ստացածներ	41-5-10	537
11	անվճարունակ այն ֆիզիկական անձինք, որոնք իրենց անվճարունակությունը հաստատող հավաստի տվյալներ են ներկայացնում	41-5-11	2017
12	հոգեբուժական կազմակերպությունում բուժվող հոգեկան խանգարումներ ունեցող անձինք	41-5-12	74
13	օրենքով սահմանված կարգով մարդկանց թրաֆիքինգի և շահագործման ենթարկված զոհերի նույնացման հանձնաժողովի կողմից զոհ կամ հատուկ կատեգորիայի զոհ ճանաչված անձինք	41-5-13	16
14	Հայաստանի Հանրապետությունում ապաստան հայցողներ	41-5-14	330
15	խոշտանգումից տուժած անձինք՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 1087.3-րդ հոդվածով սահմանված կարգով փոխհատուցում ստանալու նպատակով	41-5-15	0
16	«Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» օրենքի համաձայն ընտանիքում բռնության ենթարկված անձինք	41-5-16	12
17	«Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» օրենքի հիման վրա հարուցված քաղաքացիական գործերով պատասխանողներ	41-5-17	0

18	օտարերկրացիներ՝ արտաքսման վերաբերյալ որոշումը բողոքարկելու համար	41-5-18	0
19	անձինք, որոնց վերաբերյալ իրականացվում է անգործունակ կամ սահմանափակ գործունակ ճանաչելու, անգործունակ ճանաչված քաղաքացուն գործունակ ճանաչելու կամ քաղաքացու գործունակության սահմանափակումները վերացնելու գործերի վարույթ	41-5-19	347
20	տուժողներ, եթե նրանք պարտադիր ժամկետային զինծառայող են կամ մինչև 16 տարեկան երեխա	41-5-20	14

Ա.Քրեական գործերի վիճակագրական տվյալները՝

Ժամանա-կահատված	***Գործերի քանակ***	***քրեաիրավ-վական մասնա-գիտացմամբ հաստիքների քանակ***	***Գործերի աճ թվով նախորդ տարվա համեմատ***	***Գործերի աճ տոկոսով նախորդ տարվա համեմատ***	***Քրեաիրավական ուղղվածության մեկ հաստիքին բաժին ընկնող գործերի քանակ***
2014	3666	43	447	14%	85
2015	4600	43	934	25%	107
2016	5264	44	664	14%	120
2017	5891	44	627	12%	134
2018	6688	44	797	14%	152
2019	7183	43	495	7.5%	167
2020	7361	45	178	4%	163
2021	10492	45	3131	42%	233
2022	11117	53	625	6%	210
2023	15518	55[46]	4401	40%	282
2024	23910	70	8392	**54%**	**341**

[46] Նոր հաստիք պետության կողմից չի տրամադրվել, սակայն հաշվի առնելով քրեական մասնագիտացմամբ հանրային պաշտպանների սաստիկ ծանրաբեռնվածությունը քաղաքացիաիրավական մասնագիտացմամբ 2 հաստիք փոփոխվել է քրեաիրավականի

Բ. Քաղաքացիական, վարչական, սահմանադրական Գործեր				
Ժամանակա-հատված	***Գործերի քանակ***	***ՀՊ հաստիքների ընդհանուր/մաս-նագիտացմամբ քանակ***	***Գործերի աճ թվով նախորդ տարվա համեմատ***	***Գործերի աճ տոկոսով նախորդ տարվա համեմատ***
2011[47]	12	32	-	-
2012	17	49	5	42%
2013	363	49	346	2035%
2014	1334[48]	49/6	971	267%
2015	2588	49/6	1254	94%
2016	4750	54/10	2162	84%
2017	5865	54/10	1115	23%
2018	7021	54/10	1103	20%
2019	8608	54/11	1587	23%
2020	7926	59/14	-682	-8%
2021	8800	59/14	874	11%
2022	6947	69/16	-1853	-21%
2023	6033	69/14	-914	-13%
2024	7920	84/14	1887	31%

Վիճակագրական տվյալները վկայում են, որ 2021 թվականին վարված 10.492 քրեական գործի փոխարեն 2024 թվականին Գրասենյակը վարել է 23.910 գործ, այսինքն քրեական գործերի քանակն աճել է շուրջ 128 տոկոսով:

[47] 2011թ. միայն մի քանի քաղաքացիական գործերով էր նախատեսվում հանրային պաշտպան տրամադրել:

[48] Ներառում է նաև գրավոր և բանավոր խորհրդատվությունները: